


Ungun

891. 99
9-76



4 1 6 8

ԱՐ. ԶՈՀՐԱՐ.

# Ս Ա Գ Օ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՍ ՎԱՃԱ-  
ՌՈՒՄԻՑ ԳՈՅԱՅՍԾ ԳՈՒ-  
ՄԱՐՆ ԱՄԲՈՂՋԱՊԷՍ ՆՈՒԻ-  
ՐՈՒՄ ԵՄ ԱԶԳԻՍ ՊԱՐԾԱՆՔ  
ՀԱՅ ԿՉՄԱՆՈՐ ՀԵՐՈՍ ՄԱՐ-  
ՏԻԿՆԵՐԻ ՕԳՏԻՆ:

Հեղին. եւ նրատար. Կ. Զոհրաք.

891.39

2-76

Напечатано на-Дону  
Пар. тип. С. Я. АВАКОВА

1915

ՀՈՐ-ՆԱԿԻՋԵՒՄՆ  
ՏԳ. Ս. Յ. ԱՒԱԳԵԱՆԻ

10 NOV 2011

891.99  
9-76

21

Գ Ր Ե 8  
ԿԱՐ. ԶՈՆՐԱՐ.

1917 թ. 21  
II  
Կրկնաթիվ  
Ժ. Կ. 924-Ք.

Ս Ա Գ Օ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՍ ՎԱՃԱ-  
ՌՈՒՄԻՑ ԳՈՅԱՑԱԾ ԳՈՒ-  
ՄԱՐՆ ԱՄԲՈՂՋԱՊԷՍ ՆՈՒԻ-  
ՐՈՒՄ ԵՄ ԱԶԳԻՍ ՊԱՐԾԱՆՔ  
ՀԱՅ ԿԱՄԱԻՈՐ ՀԵՐՈՍ ՄԱՐ-  
ՏԻԿՆԵՐԻ ՕԳՏԻՆ.

Հեղին. և հրատար. Կ. Զոհրաբ.

PAPIER DE POSTE

PAPIER DE POSTE

Նոր-Նախիջևան  
Տպ. Ս. Յ. ԱՆՍԳԵԱՆԻ

1915

Нахичевань на-Дону  
Пар. тип. С. Я. АВАКОВА



77046.64

Ամենայն տեղ մահը մի է,  
Մարդ մի անգամ պիտ մեռնի,  
Բայց երանելի ով իւր ազգի  
Ազատութեան կը դոհուի:

«ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ»

Դուք, ով քաջամարտիկ հայ կտրիճներ, որ մահն անարգելով ազգի վրէժը սրտերումդ, ձեր քաջագործութիւններով բարձրացրիք հայի արժանիքը թէ պատերազմի դաշտում և թէ աշխարհի առաջ, ձեր սխրագործութիւններով վերականգնեցիք մեր ազգի պատմական-զինուորական պատիւը, ձեր թափած անբիծ-անարատ արիւնովը դուք մաքրեցիք հայի ստրկութեան ամօթալի-արատուոր բիծը, փառք և պատիւ ձեզ:

Դուք ձեր սրերով փշրեցիք դարաւոր գերութեան ժանգոտ շղթաները... ձեզ եմ նուիրում իմ այս փորձիկ և աննշան աշխատութիւնս իբրև յիշատակ մեր կրած տառապանքների և ունեցած յաջողութիւնների:

Կ. Զ.

Գարունը բացուել էր. դաշտերը ձիւնից մաքրուած, արեգակի ջերմութիւնից չորացած և կանաչ արօսներով զարդարուած, ժպտում էին մի առանձին գեղեցկութեամբ:

Սարերում դեռ ձիւնը մնացել էր և յամառութեամբ դիմադրում արևի ջերմութեանը, բայց և այնպէս հեռզհեռէ ընկճւում էր և յաղթւում, իսկ հալչող ձիւնից առաջացած ջրերը, փոքրիկ առուակներ դարձած՝ թափւում էին դէպի դաշտ—դէպի ցած... և Սալմաստի լայնատարած գեղեցկատեսիլ դաշտը սուղում:

Մ. գիւղը նոյնպէս կենդանութիւն էր ստացել. գիւղացիք իրենց անասուններով գուրս գալով դաշտ, արաերում աշխատում էին: Իսկ նրանք, որոնք անկարող և անընդունակ էին այգւլիսի աշխատանքի, մնում էին իրրե տան պահապաններ:

Մ. գիւղը գերազանցում էր միւս հայաբնակ գիւղերից նրանով, որ բնակիչները յաճախ հիւրընկալում էին այդ գիւղում եւրոպացի ճանապարհորդների և Ռուսաստանից եկող ազգակիցները, որոնց հետ յաճախակի շփումն ունենալով իւրացնում էին մասամբ նրանց հայեացքներն ու հասկացողութիւնները, ազդուելով նաև նրանց կուլտուրայից ու քաղաքակրթութիւնից:

Ս. Աստուածածնայ վանքի վանահայր Սահակ վարդապետը տարեկան առնուազն երկու անգամ

այցելում էր Մ. գիւղը և ամեն անգամ վանք վերագանալիս իւր հետ վերցնում ու սանում էր չորհրհինգ զանազան հասակի պատանիներ և պահելով վանքում սովորեցնում էր նրանց կարգալ ու գրել:

Սակայն պատկառելի հայր սուրբը միմիայն կարգալ-գրել սովորեցնելով չէր բաւականանում. նա գիտէր, որ հայ գիւղացուն ինչպէս անհրաժեշտ է ուռնենալ եզն ու գութանը, կարգալն ու գրելը, ևս առաւել անհրաժեշտ է այդ իւր ստացուածքը պաշտպանել ամեն տեսակ պատահական կողոպուտից-թաւանից, որ այդ երկրում, զանազան բրգական գաղտնաբարոյ ցեղերի համար, սովորական բան էր: Ուստի այդ հինաւուրց վանքի մամուսպատ պարխոպները դռները միշտ բաց էին հայ երխասարգները առաջ և այդ սրբազան բակը կատարեալ զինավարժութեան վայր էր դարձել:

Մատաղ սերունդի հետաքրքրութիւնը դէպի կարգալ-գրելը գնալով աճում էր և մեծ ծաւալ ստանում. իսկ զինավարժութիւնը մի տեսակ զուարճախող էր նրա համար: Սակայն այդ ամենը միայն ազամարդկանց համար էր. կանայք և աղջկերք միանգամայն զուրկ էին այդ բաւականութիւնից, թէև նոյնքան ուժեղ կազմուածքի տէր, զիմացկուն և քաջասիրտ էին ինչպէս ազամարդիկ:

Սահակ հայր սուրբի օրինակին հետեից զիւրի բարեկրօն աէր Մարկոսի երէցիկինը— Սաղուխ տերուհին, որի ջանք ու աշխատանքով մի քանի աղաների աղջիկները կարճ ժամանակում ազատ կերպով սովորեցին կարգալ ու գրել:

Անգրագէտ զիւրում յանկարծ յայտնուեցին Պոօշեան, Բաֆֆի, Մերենց և այլ հայ հեղինակները երկերը...

Եւ այդ ժողովուրդը սուրում էր շրջապատուած վայրենի ցեղերով-բրգերով: Սիւնի, Շիա, Մարդիկ և եղիտէ բիւրգ ցեղերից միմիայն վերջիններս հայերի հետ վարուում էին բարեկամաբար. միւսները-բոլորն էլ կատաղի թշնամիներ էին, որոնց սոնահարութիւնները անվերջ էին հայերի նկատմամբ:

Այդ գաղանաբարոյ բրգական ցեղերը յաճախ յարձակուում էին հայ գիւղերի վրայ, կոտորում, թաւանում, սպանում և անպատիժ մնում. գիւղացիք գանգատուելու չէին համարձակուում, իսկ եթէ գանգատուելու էլ լինէին, դա կըմնար «ձայն բարբառոյ յունապատի». ուստի լուռ ու մունջ ստիպուած տանում էին ամեն մի գրկանք...

Ահա այդպիսի ծանր գրութիւն էր ստեղծուել հայ գիւղերի համար, զլխուտորպէս Մ. գիւղի, որի մէջ հարստութիւնը անհամեմատ աւելի էր, քան թէ միւս գիւղերում:

Ի հարկէ եղել են գէտքեր, երբ գիւղի երխասարգներից աւելի կրակատները գիմել են ինքնապաշտպանութեան, սակայն տարիների ընթացքում այդ հասկացողութիւնն էլ այնքան էր թուլացել, որ գիւղացիք մի քանի զինուած քիւրգ տեսնելիս երկչոտ նոպատակները նման մտնում էին իրենց խրճիթները և փակուում. իսկ ազաները թանկագին նուէրներով խաների և բէկերի հետ մի կերպ պահպանում էին իրենց բարեկամութիւնը... և այդպիսով շատ անգամ գերծ մնում թաւանից ու կողոպուտելուց: Տուժողը վարձեալ մէջ տեղի հասարակութիւնն էր...

1.

Կապօյէնց Սափօյին Մ. գիւղում մեծ և փոքր ամենքը ճանաչում էին: Նրա հսկայական կազմուածքը. բարձր հասակը, գեղեցիկ դէմքը, մի դոյզ սև և փայլուն աչքերով և նրա երկաթեայ բազուկները բուրովին անհամապատասխան էին քսան ու չորս տարիքին:

Սափօն իւր գերբնական ուժովը գիւղի երիտասարդների վրայ սարսափ էր ազդում, ամենքը կարծես նրանից վախենում ու սարսափում էին, բայց և այնպէս շատերը աշխատում էին մի կերպ վնասել, թագարդի մէջ դցել նրան, որ միանգամից ազատուին, իրենց կարծիքով, այդ վնասակար երիտասարդից:

Գիւղում, կամ շրջակայքում գոյութիւն, մարդասպանութիւն պատահելիս անմիջապէս այդ վերադրում էին Սափօյին և նրա անունն էին քաջբըշում. հազար մի տեսակ սուտ լուրեր տարածում թէ՛ Սափօն մի խումբ աւազակների գլուխ անցած կոզպառում-թաղանում է խաղաղ ժողովրդին և սերտ յարաբերութեան մէջ է քրդերի հետ:

Սակայն գիւղի երիտասարդների մէջ կային և այնպիսիները, որոնք հակառակ էին այդ տեսակ բամբաստաններին. դովում էին Սափօյի քաղցր և հայրենասէր բնասրութիւնը, նրա անվեհեր քաջագործութիւնները և բարի նախանձախնդրութիւնը:

Սափօն արդարև խոհեմ և բաջ երիտասարդ էր: Սահակ վարդապետի ներշնչած գաստիարակութիւնը շատ լաւ էր ըմբռնել. իսկ կովկասից եկած հայդուկների հետ ունեցած շփումն, որոնց հետ յաճախ պատահում էր վանքում և շատ անգամ ինքն էր նրանց

առաջնորդում սահմանն անցկենալու, սենցել էր իւր յատուկ. հեռեանքը: Նա չունէր եզներ, գոմէշներ, որ կարողանար պարապել հողագործութեամբ. նա ունէր մի ընտիր Ղարաբաղի նժոյգ, այնալու. հրացան, մաուզէնի ատրճանակ, արծաթակոթ դաշոյն և մի ծերունի հայր: Ուստի ստիպուած էր այլ միջոցներով հայթայթել թէ՛ իւր և թէ՛ հօր ապրուստը:

Մայրը երկու տարի առաջ վախճանուել էր. նրան թաղել էին գիւղի գերեզմանոցում. և բացի Սափօյից այլ զաւակ չէր մնացել: Եղածները փոքր հասակներում մեռել դնացել էին: Իսկ ծերունի Կապօյէնց Մարկոսը գողգոջուն ձեռներով հողին էր յանձնել հինգ մատաղահաս զաւակներ և վերջապէս սիրեցեալ ամուսնուն ուստի այդ հասակում նրան անհրաժեշտ էր խնամող մէկը:

Սափօն այդ լաւ էր հասկանում և շատ մտածում այդ մասին: Այդ միտքն էր, որ վերջապէս ստիպեց նրան առաջարկել իրենց հարեան Հեղինէ Բաջուն, որը մօտ յիսուն տարեկան մի այրի կին էր՝ մի միայն ցերեկները գալ տանտիկնութիւն անել և խնամել իւր ծերունի հօրը:

Հեղինէ Բաջին ամենայն ուրախութեամբ ընդունեց Սափօյի առաջարկութիւնը, մանաւանդ վերջինս խոստացաւ առատ վարձատրութիւն և այն օրից իւր օրերը անցկացնում էր Մարկոս ապեր հետ, խնամում էր ծերունուն, հացն ու կերակուրը պատրաստում, խրճիթը մաքրում, շորերը լուանում և կարկատում և մէկ խօսքով անում էր այն ամենը, ինչ վերաբերում էր տանտիկնութեան:

Սափօն օրերով, նոյն իսկ շաբաթներով, հեռանում էր գիւղից. սէր կամ ինչո՞ւ—այդ ի հարկէ ոչ որ չ'զխտէր. այդ հանգամանքը առիթ էր տալիս շա-

տերին առատ-առատ ստեր հնարելու և տարածել նրա հասցէին վերև յիշուած ամականները:

Անակնկալ կերպով յանկարծ երևում էր նա. ծերունի հայրը չափազանց սրախանում էր, որ իւր Սաղօն ողջ-առողջ վերադարձաւ. իսկ վերջինս իւր աշխատած փողերը դնում էր հօր աւաջ, թողնելով իւր մօտ այնքան, որ բուսական լինի ընկերների հետ խնճոյք սարքելու:

Ինչպէս գիտինք Սաղօն ունէր իւր համակրողները, և նրանց հետ էր խնճոյքներ սարքում, ժամանակ անցկացնում, իրարու ջան ասում: Այդ ի հարկէ տեսնում էին հակառակորդները և, կրկնակի լայն ծաւալով, տեղ էին ապրիս իրենց ատելութեանը. մանաւանդ շատ էին զայրանում Պօղոս աղայեցի Սեղրակի վրայ, որը չափազանց համակրում էր Սաղօյին և ասում «տեսնուած բան է որ ազա մարդու ազան նստի-վերկենայ և քէֆ անի Սաղօյի նման աւսողակի հետ» մինչև անգամ յանդգնեցան զնալու Պօղոս աղայի մօտ և աշխատում էին, որ վերջինս արգելէ իւր սրգուն, խզել տայ Սաղօյի հետ ունեցած բարեկամական և ընկերակցական կապերը:

Սակայն խելօք ազան սրտասխանեց. «ես Սաղօյին շատ լաւ եմ ճանաչում. նախ որ նա շատ համեստ, խելօք և ազնիւ ազամարդ է. երկրորդ՝ քաջ և անվախ մի երիտասարդ. երանի թէ մեր գիւղի երիտասարդներն ամենքն էլ նմանէին Սաղօյին:

Ո՞վ կարող է մտաւնալ-չյիշել այն գէպքը, երբ անցած աշնանը, Շէյխի քրդերը յարձակուեցին մեր գիւղի վրայ — ասացէք ձեզնից ո՞ր մէկը երևաց զըրսում ըսցի Սաղօյից. նա չէր, որ գիւղը ազատեց թալանից և մեր կանանց ու աղջիկներին պատիւը

բռնաբարութիւնից: Եւ վերջապէս մեզնից ո՞վ չգիտէ, որ այն օրից ի վեր ոչ մի բիւրդ սիրտ չի անում Սաղօյի տնից սոք զնեղ մեր գիւղը»: Այսպէս ջրելով ճամբու գրեց այդ ազամարդի գէմբով ու սարագով ջադուկներին:

II.

Թաթուլու աղբիւրը գտնոււմ էր Մ. գիւղի արևելեան կողմում:

Ամբողջ գիւղի բնակիչները իրենց խմելու ջուրն այդ աղբիւրիցն էին բերում, որ զովացուցիչ և քաղցր լինելու պատճառովը ստացել էր «թաթուլ» անունը:

Գիւղի հարսները և աղջիկները սովորաբար ամեն օր գնում էին աղբիւր և սափօրները լցրած վերագառնում ու անեցոց զովացնում:

Աղբիւրից ջուր բերելը մի առանձին զուարճութիւն էր հարսների և աղջիկների համար. ճանապարհին երգելով-խօսելով գնալ ու վերադառնալը նրանց մեծ հաճոյք էր պատճառում: Միայն մի քանի աղաների ընտանիքներ բացառութիւն էին կազմում. նրանց հարսները և աղջիկները չէին գնում աղբիւր, այլ ծառաներին էին ուղարկում:

Բաղօյեցի Գէորդ ազան էլ խմելու ջուրը իւր ծառաների ձեռքով էր բերել տալիս. չնայած, իւր մինուճար աղջկայ — Սասղիկի թախանձանքին՝ այնուամենայնիւ չէր համաձայնում, որ իւր աղջիկը սափօրը ուսին միւս հասարակ գեղջիկուհիների հետ գնայ աղբիւր և ասում էր «ազա մարդու աղջկան ամօթ է այգավտի ծառայութիւններ անելը, ջուր բերելու համար ունինք ծառաներ, իսկ դու մայրիկիդ մօտ տանը մեզ աւելի օգտակար կարող ես լինել»:

Սեղճ աղջիկը այդ խօսքերից միանգամայն շուտ-  
րամ՝ ինքն իրան հարց էր տալիս. ախ՛ր ի՞նչ ամօթ  
բան կայ. չէ՞ որ աէրաէրակիներ մեզ գրել-կարդալ  
սովորեցնելիս միշտ ասում էր. «ամեն մարդ, ինի նա  
աղամարդ թէ կին, պարտական է աշխատել թէ մտա-  
ւորապէս և թէ Ֆիզիքապէս. չկայ այնպիսի մի աշ-  
խատանք, որ մարդու արժանաւորութիւնը ստո-  
րացնէ»:

Եւ այս հասկացողութիւնը մի անգամ ընդ միշտ  
ազաւորութեամբ Աստղիկի ուղեղի մէջ՝ դժուարացնում  
էր ըմբռնելու հօր արատապանած խօսքերի իմաստը:

Մի գեղեցիկ օր էր. սպրիլ ամսի վերջի պարզ  
օրերից մէկը. առաւօտ արեւածաղի ժամանակ, գրկից  
Աբրահամի աղջիկ-Աշխէնը սովորը վերցրած պնտ-  
րասաւում էր գնալ աղբիւր. այդ նկատեց Աստղիկը,  
վազեց իւր հօր մօտ, որը այդ բոպէին իւր բակում  
գրօնում էր, խնդրեց թոյլատուութիւն Աշխէնի հետ  
միասին Աղբիւր գնալու:

Գէորդ աղան որբան էլ սկզբունքով հակառակ էր  
դրան, այնուամենայնիւ զիջաւ, բայց պատուիրեց որ-  
քան կարելի է շուտով վերադառնալ տուն, և այդ  
երկու մատաղահաս օրիորդները ուրախ-ուրախ ցատ-  
կոտելով բռնեցին «թաթլու» աղբիւրի ճամբան:

Գնալիս նրանք խօսում էին և մերթ ընդ մերթ  
երգում. դեռ չ'հասած աղբիւրին, յանկարծ, իրենց  
յեակից ձիւ ոտների արեփիւն լսելով՝ յետ նայեցին  
և աեսան մի աղամարդ, նժոյգը տակին խաղացնե-  
նելով գալիս էր. Աստղիկը գառնալով իւր ընկերուհուն  
ասաց.

— Աշխէն, — ձիւնոր է գալիս. քաշուենք մի  
կողմ թող նա անցնի ապա մենք կը մօտենանք աղ-  
բիւրին.

— Է՛հ, ի՞նչ ես դուրս տալիս. ես ամեն օր այս  
ճանապարհի վրայ պատահում եմ տանեակ տղա-  
մարդկանց... ի՞նչ է, հօ ամենքից էլ չեմ փախչե-  
լու. ճանապարհ է, անց ու դարձ անողներ որբան  
կուզես կան... ի հարկէ դու տռաջին անգամն ես անց-  
նում այս ճանապարհովը. և հենց այդ է պատճառը,  
որ քեզ տարօրինակ է թւում. բայց ես սովոր եմ...  
երբ ինձ խօսացնեն, առանց տատանուելու համարձակ  
կը խօսեմ և կը պատասխանեմ...:

— Կը խօսեմ... կը պատասխանեմ... չէ՞ որ  
օտար աղամարդի հետ խօսելը և նրա գէմքին մօտիկ  
տալը ամօթ է...

— Թող ի սէր աստուծոյ այդ ամօթը... սրտե-  
ղից ես վերցրել այդ բառը. վերջապէս այդ ամենը  
արդէն հնացած բաներ են: Դու, որ զիշեր ու ցե-  
րեկ գրքեր ես կարդում և շատ անգամ ինքդ էլ խօս-  
քի մէջ միշտ ասում թէ՛ չափազանց ամօթխա-  
ծութիւնը վնասում է պարկեշտութեանը և մեծապէս  
չարիքներ է յառաջ բերում, պատմում էիր Սօսի և  
Վարդիթերի պատմութիւնը, այդ բոլորից յետոյ  
այստեղ գաշտումը ամօթի մասին ես մտածում...:  
Առա, ի՞նչ ամօթ բան կայ, հէնց վերցնենք այդ մօ-  
տեցող ձիւնորին. եթէ նա սիրուն և ջահել տղա-  
մարդ է ինչո՞ւ չպատասխանեմ նրա հարցերին և գէմ-  
քին մօտիկ չանիմ. սոյ մօտենում է... տեսնենք սի-  
րուն է՛:

Այս ասելով նա ցած գրեց աղբիւրի մօտ սա-  
փորը:

Հէնց այդ բոպէին հասաւ և ձիւնորը ցած գա-  
լով ձիւնը շնորհալի կերպով բարեց օրիորդնե-  
րին:

Ասաղիկը կարմրեց, իսկ Աշխէնը ցածր ձայնով  
ասաց:

— Սազօն է. դու նրան ճանաչում ես:

— Ա՛հ... թէեւ շատ անգամ լսել եմ նրա մասին,  
բայց իբրան անա տոաջին անգամն է որ տեսնում եմ...

Երբ աղջիկները իրենց սափօրները լցրին ազրիւրի  
ջրովը, երիտասարդը անխառն կերպով մօտեցաւ  
Աշխէնին, հարցրեց նրա ում աղջիկը լինելը և անուշը  
ու զոհացուցիչ պատասխան ստանալով և աւելի սիրա-  
տաւած՝ նոյն հարցով գիմեց նաև Ասաղիկին, որի գե-  
ղեցիկութիւնն և մարմնի կազմուածքը մի գերբնական  
ուժով կարծես կախարդել էին նրան:

— Իսկ դուք օրիորդ ո՞ւմ աղջիկն էք և ինչպէս  
է ձեր անունը:

Ասաղիկը լուռ էր. նա ամաչում էր պատասխա-  
նել այդ հարցին:

Երիտասարդը նորից կրկնեց իւր հարցը, բայց  
այս անգամ աւելի բազրաճնչիւն բառերով այնպէս,  
որ Ասաղիկը այլևս անկարող էր լսաթիւն պահպա-  
նել ու պատասխանել:

— Ես Բալօյէնց Գէորգի աղջիկն եմ—Ասաղիկը...

— Բալօյէնց Գէորգի աղջիկը— կրկնեց Սազօն  
միքենարար և նրա ճակատի վրայ երևացին մի շարք  
կնճիւղներ. մի բոլորէ նա մնաց լուռ, և ապա շարու-  
նակեց.

— Ասացէք խնդրեմ, դուք ամէն օր գալիս էք  
այրիւր. .

Այս հարցը մնաց անպատասխան, սրովհետև գիւ-  
ղի կողմից գէպի ազրիւր երգելով գալիս էին մի խումբ  
աղջիկներ և հարսներ:

Աշխէնը և Ասաղիկը շտապով վերցրին ջրով լցրած

սափօրները և պատրաստուած էին հեռանալ. Սազօն  
անթարթ աչքերով նայում էր Ասաղիկին, որի զրա-  
ւիչ գեղեցիկութիւնը կարծես հմայել էր նրան. Նայեց  
և Ասաղիկը գէպի նա և այն հայեացքները վայրկի-  
նապէս հանդիպելով իրարու այդ երկու մտապ սըր-  
տերի մէջ վառեցին սրբազան կրակը և սիրոյ ողջա-  
կէզի սեզանը բռնկեց այդ կրակովը...

Երիտասարդը օգուտ քաղելով հանդամանքից, մօ-  
տեցաւ և կամացուկ ասաց.

— Ասաղիկ ջան, շատ անգամ լսել էի քո գե-  
ղեցիկութեան մասին և հոգիս միշտ փափագում էր  
քեզ տեսնելու... գոհ եմ, որ այսօր այդ կատարուեց...  
սակայն իմ սիրար փոխանակ հանգստանալու, կար-  
ծես աւելի ճմլւում է. խնդրում եմ թոյլ ասը ինձ  
խմելու քո սափօրի ջրիցը...

Ասաղիկը լուռ բարձրացրեց սափօրը և երիտա-  
սարդը խմեց իւր սիրած աղջկայ ձեռքից «թաթլու»  
ազրիւրի ջրիցը: Նա մանկութիւնից սովոր էր այդ  
ջրին և խմում իբրև մի հասարակ ջուր, սակայն այ-  
սօր կարծես դա սրբոց մատուցները ջուրն էր Սա-  
զօյի համար. աղատութեան և անմահութեան կենաց  
ջուրն էր և այդ աղաւորութեան աակ հասաւ իւր  
ձին, կրկին և կրկին նայեց Ասաղիկին և սլացաւ  
գէպի գաշա. իսկ աղջիկները դարձան գէպի զիւր:

Ճանապարհին Աշխէնը հանարի ձեռով կրկնում  
էր...

— Ասաղիկ ջան, այս օրուանից Սազօն քո գե-  
րին է, բայց ինչ օգուտ, հօ նա չի կարող քո մար-  
դը դառնալ, չէ՞ որ քո հայրը հարուստ է, իսկ նա  
"չ. հէնց այդ հանգամանքը գալիս է խանդարելու  
ամեն ինչ:

Աստղիկը լուս էր և ըստ երևոյթին տիտը... բայց նրա սիրաւը խօսուած էր. այնտեղ ևս վառուել էր սիրոյ հրատապ կրակը. նրա աչքերի առաջ պատկերանում էր Սագօյի սիրուն գէմքը, վայելչակազմ հասակը և սեաներ գլուխը, որ սափորից ջուր խմելիս, նա շատ լաւ էր նկատել:

III.

Աննաուլի արևմտեան լանջին, մի խօրը ճեղքուածքի մօտ, մեծակոյտ քարի վրայ նստած էր մի մարդ: Նա իւր աջ ձեռքը ծնոտին դրած, արծուի աչքերը ուղղած գէպի հեռուն մերթ Բասեն, մերթ գէպ Ալաշկերտ, նայում էր այդ տարածութեանը. հասար տեսակ յիշողութիւններ շարան-շարան անցնում էին նրա մաքուրը:

Վերջապէս քնից սթափուածի նման շտապով վերկացաւ իւր նստած տեղիցը և զիմեց գէպի ցած, գէպի սարի ստորոտը:

Մօտ քառասուն հինգ-քսուասուն ութը տարեկան, բարձր հասակով լեռնականի շորերով մի սպամարդ էր դա. ստից-գլուխ զինուած, վամվուշաների խաշածև կապը կրճքին, նմանում էր առասպելական աժգահայ-հսկայի:

Գա անպարտելի և քաջատիրա յայտնի Սերոբ Աղբիւրն էր...

Գիշերուայ այդ ժամին սարի ստորոտումը հանդստանում էր նրա խումբը. նա զիմեց գէպի այդ մի բունն քաջերին

Տղերքը, նկատելով իրենց հրամանատարին, ամե-

նայն ակնածութեամբ ստքի կանգնեցին և խօր գլուխ տալով հրացանները խոնարհեցրին հրամանատարի առաջ. դա յարգանքի, հնազանդութեան և հաւատարմութեան նշանն էր:

Սերոբ վաշտն մտերմական հայեացքով զիմեց իւր մի խումբ քաջերին և ասաց:

— Տղերք, այս անգամ Սագօն կարծես ուշացաւ, աճաւասիկ կէս գիշերն անց է, իսկ նա չկայ մենք առնուազը երկու ժամ կը լինի, ինչ որ սպասում ենք, ժամանակը անցնում է, պէտք է որոշել մեր անելիքը, այլ ևս երկար սպասել չենք կարող:


Գուք շատ լաւ գիտէք այս տեղերը. մենք կարող ենք ենթարկուել վատնգի, մանաւանդ այդ Մարգիկների կողմից ուստի թող ձեզնից Աշտար և Գուրգէնը զնան շրջակայքը հետազոտելու, իսկ մնացածները կազմ և պատրաստ սպասեցէք իմ հրամանին:

Դեռ հրամանատարի խօսքը բերնումն էր, յանկարծ լսուեց բուխ խորհրդաւոր ձայնը. դա հայդուկների պայմանանշանն էր. նոյն ձայնը կրկնուեց և խմբի կողմից: Եւ խաւարի միջից հրամանատարի գէմ-յան զիման յայտնուեց մեզ ծանօթ Սագօն, խոնարհեցրեց իւր գլուխը և լուս բարեց.

— Սագօ ջան, այս անգամ դու մեզ շատ սպասել տուիր, ինչ պատահեց քեզ:

— Ներիւր ինձ իշխան, դեռ սահմանին չհասած, չ'զիտեմ ինչից իմ երկու բեռնակիր ձիաներից մէկը յանկարծ հիւանդացաւ և ընկաւ, որին ստիպուած էի թագնել ձանապարհին. իսկ սահմանապահ զօրքի հրամանատարը նոր նշանակուած մի սպայ էր և բաւական երկար ժամանակ բռնեց կնձ:

— Յետոյ, ինչպէս անցկացրիր:



— Ինչպէս, ձիու բեռը դարսեցի բրդերից մէկի՝ Ալամբեարի ուսին, երկու սակի էլ կոխեցի սպայի ձեռքի մէջ ու անցկացայ:

— Կեցցես Սազօ, դու կարիճ ազամարդ ես:

Այս ասելով՝ Սերոբը համբուրեց Սազօյի ճակատը և հրամայեց ձիու ու բրդի բեռները վայր իջեցնել:

Կապոցները մէջ կանոնաւոր կերպով դարսուած էին զէնքերը, քսանի չափ դանազան սխտեմի հրացաններ, նոյն չափ էլ Մատուցէրի սարճանակներ:

Դրանց կողքին մի միջակ պարկի մէջ լցուած՝ հազարի չափ փամփուշաներ:

Այդ ամենը տեսնելով, Սերոբը դարձաւ Սազօյին և հարցրեց.

— Տղաներից ո՞վ էր եկել յանձնելու քեզ այդ սրբութիւնները:

— Միայն կարօն, Զիրբայէլի ուղեկցութեամբ. խեղճ Կարօ մեղքս եկաւ— շատ էր տխուր. սիրահարուած է. հոգոյներ էր արձակում իր սրտից, և իւր սիրած աղջկան-Մարօյին յիշում:

— Է՞հ ջահել է, ոչինչ, մի օր նա էլ կը հասնի իւր մուրազին. դու էլ ջահել ես Սազօ, տայ Աստուած դուք երկուսով էլ հասնիր ձեր մուրազին. սա այս և քանի գեռ ուշ չէ՝ շտապիր վերադառնալու: Այս ասելով, մի ծրար յանձնեց Սազօյին և սպա դառնալով իւր խմբին հրամայեց շարժուիլ:

Վազգէնը մօտեցրեց մի գեղեցիկ նոսր և իշխանը թուաւ ձիու մէջքի վրայ: Նա կրկին անգամ սեղմեց Սազօյի ձեռքը, իւր քաջ խմբի հետ անյայտացաւ մթութեան մէջ. «Բարի ճանապարհ» մըթմութաց Սազօն, և ինքն էլ իւր բրդերի հետ նոյնպէս հեռացաւ ժամադրեալ վայրից:

Լուռ էր Սազօն. հազար մի տեսակ մաքեր պաշարել էին նրա ուղեկը. այդ ըսպէին նմանում էր նա «Կախարդուած Արքայորդուն» նստած Արծուիկի մէջքին. կարծես ըստըստին մտացել էր իւր բրդերին:

Վերջիններս նոյնպէս լուռ էին. նրանք չէին համարձակում խանդարել քաջին, որին կուռքի նման էին պաշտում. դորա եզիզի քրդեր էին և յաճախ պարծենալով ասում էին, թէ իրենց նախնիքները մի ժամանակ նոյնպէս հայեր են եղել:

Վերջապէս Արծուիկը փռշտաց և Սազօն սթափուեց, յետ հայեց ու ժպտաց. նա տեսաւ թէ ինչպէս քրդերը երկուսով մի ձիու վրայ նստած հեռուում են իրեն, իսկ այդ տեսարանը մի վայրկեան մտացրեց նրան ամեն ինչ և նա ծիծաղելով-ձայնեց.

— Ղահրաման, մօտեցէք այստեղ, ասացէք մը տեղն ենք գանուում. այս թանձր մտախտուղը պատել է ամբողջ դաշան ու ձորը. ես չեմ կարող սրտշէլ:

— Ազա Սազօ, մենք այժմ գանուում ենք Սրէմի օբաների մօտ. դու հրամայեցիր վերադառնալիս, այնտեղ հանգստանալու:

— Գնանք ուրեմն ուղղակի իմ բարեկամ Մոզի մօտ:

IV.

Զօրա գետի ափին, մեծակոյտ քարի վրայ նստած էր մի Գէրվիշ:

Նրա հնամաշ վերարկուի տակից երևում էր խիտ մազերով պատած արեակէզ կուրծքը. ալեխառն մօրուքը և մազերը անկանոն, ուսին զցած վազրի մորթը, իսկ աջ ձեռքի մէջ բռնած քէշկիւլը (կակօս

ընկուզի կեղևը), որը գործածուած էր իբրև ջրաման և երկաթեայ գաւազանը, որի վրայ ձուլուած էր «Ալիի» անունը, պատճ էր գետնին: Դէրվիշը շեշտակի նայում էր այդ գաւազանի վրայի խորհրդաւոր ստաներին:

Յանկարծ լսեց մի սանաձայն. ու նրան մօտեցաւ մի գեղեցկագէտ երիտասարդ:

— Սառիկ ջան. ինչու ուշացար — հարցրեց Դէրվիշը:

— Հայր սուրբ. — ժողովը շատ երկար ակեց. մեծ քաղաքից էլ եկած էր յատուկ պատգամաւոր. մտքերի յեղափոխում, փիճարանութիւն:

— Ա՛խ այդ անմիտ փիճարանութիւնը, մի բան, որ միշտ խանդարել է մեր գործին և բանդել մեր սունը. ամեն ոք ինքնիրան խելօք փիլիսոփայ է կարծում. ակսր ի՞նչ փիճելու բան կայ:

— Արդար է ձեր գայրոյթը հայր-սուրբ. սակայն այս անգամ փիճողները մերտնք չէին, այլ միւս խմբի մարդիկ, որոնք պարզ հակառակում էին մեր որոշումին: Զարմանալի հասկացողութեան տէր մարդիկ են դոքա. չէ, հայր սուրբ, զրանց հետ միտսին գործելը, որքան էլ ցանկալի լինի, այնու-ամենայնիւ ես համոզուեցի, անկարելի է: Ահա և նա, բացականչեց Սառիկը, ցոյց տալով հեռուից երեսացող մի ձիաւոր. կամ նա է, կամ Սաաթար խանը. ես զրանց հեռուից չեմ կարող զանազանել. ձիւ վրայ նստած շատ նման են իրարու:

— Դու չես սխալուում Սառիկ, ես աւելի փորձուած եմ, բայց և այնպէս շատ անգամ շփոթուում եմ. մինչև զէմքերի գծադրութիւնը չբանսեմ, չեմ

կարող որոշել չ'նայած, մէկը տարիքաւոր է իսկ միւսը ջահել:

Մինչդեռ ձիաւորը մօտենում էր, նրա տակի ձին բրանած, վրվուրը բերնին կանգնեց, մի ակնթարթում ցած իջաւ ձիուցը և մօտենալով Դէրվիշին «Աստուած օգնական» ասաց և յանձնեց մի նամակ. իսկ Դէրվիշը բաց անելով նամակը գործաւ աղաներին.

— Տեսնենք ի՞նչ է գրում իշխանը, և սկսեց կարգալ:

«...Պարակելի բոլոր պողոտաւ ծառերը պատուատեցինք. խոտանում են առտա բերք. այս գարնան կսկսնենք կրկնապատակուեցին. մաղարայի մէջ տակաւին ջուր կայ. սակայն առտա անձրևների յուսով ինք ապրում. կարիքը մեծ է, փող փոխադրեցէք: Մորեխի ոչնչացնելու հարցը առ այժմ թողէք. փոխադրեցէք օգապարիկով. ծառաները լաւ են աշխատում և լսում իրանց աէրերին».

Այս տարօրինակ նամակի թարգմանութիւնը մօտաւորապէս այսպէս էր:

«...Այգետանում (Վան քաղ. մասը) ամեն մի հայ աղամարդ զինուած է. Վարդայ վանքի մթերանոցում դեռ բաւականաչափ գէնք կայ. յուսով ենք էլի կը փոխադրէք. փոխադրեցէք, կարիքը շատ մեծ է. Մարդիկ քրդական ցեղին ոչնչացնելու որոշումը առ այժմ թողնել աւելի պատէ՛՛ ժամանակի. Սաղօյի ձեռքով փոխադրեցէք գէնքեր. աղայքը կազմակերպութեան ամենաճաւատարիմ զինուորն են»:

— Օհօ. լաւ տեղեկութիւններ է տալիս մեզ Սերսը, բացականչեց Դէրվիշը: Ես սրան էի սպասում. այժմ գո՛՛ սրտով զնամ աղօթելու յաղագս խա-

դադութեան ազգի մարդկան, իսկ դուք, սիրելի գաւազ-  
ներս աչալուք ի ձեզ և այս գաղտնիքը պահեցէք ձեր  
սրտում. դու Սառիկ, կարող ես այդ մասին հազար-  
գէլ միմիայ կարօյն իսկ դու Սաղօ ջան, ոչ սրի.  
հասկացա՞ք — դէ՛հ բարի ճանապարհ:

Սառիկն հեռացաւ և ընկաւ Սալմաստ ասնող  
ճանապարհը, իսկ Սաղօն գիւմեց գէպի իւր մայրենի  
գիւղը: Դէրիշը յենուած երկաթեայ ցուպին՝ մտա-  
խօս հայում էր հեռացող ազաներին. և ապա մի խոր  
հոգոց արձակելով իւր քայլերը ուղղեց գէպի Գոշ-  
մանածոր, որի բլուրների վրայ կանգնած էր պատ-  
մական մինաստանը — Տէրիկ վանքը:

Պատկառելի Դէրվիշը յիշեալ վանքի վանահայրն էր:

Նախ քան վարդապետի վանք հասնելը, միմեց  
և վրայ հասաւ գիշերը. ամպերը սկսեցին կուտուել  
երկնակամարի վրայ, և մանր անձրեւ սկսեց տեղալ:

Հայր սուրբը շտապում էր մի սոք առաջ հաս-  
նել մենաստանի պարիսպներին սակայն խաւարն այն  
աստիճան թանձրացաւ, որ մարդ-մարդու տասը քայլի  
վրայ անկարող էր նկատել: Ճանապարհից շեղուած  
մնացել էր շուարած. ինչ անէր, սը կողմ գնար. ամ-  
պամած երկնքի վրայ մի ասող գնէ չէր երևում.  
Թեթև գեփիւնն անգամ բացակայում էր: Չոյն տալ,  
բզմեւել, հաւաքի կանչել. ով էր լսողը. երկրորդ, չէ՞  
որ դրանով միմիայն աւազակներին հետաքրքրութիւնը  
կարելի էր շարժել և հրաւիրել այգալիսով ինքն  
իրան կողպուտի մասանել. ուստի վճռեց լուս մնալ և  
շարունակել մի ուղղութեամբ գնալը:

Անձրեւը գնալով կարծես աւելի ստատկանում էր.  
յանկարձ վարդապետի մի սոր սայթաքուեց և նա  
իսկայն հասկացաւ, որ առաջը գառիվայր կայ, ամե-

նայն զգուշութեամբ սկսեց իջնել գէպի ցած. դա վան-  
քի հանգէպ գանուած գառիվայրն էր:

Մթութեան մէջ ամեն մի թուփ նրա աչքերին  
բերդերի չափ վիթխարի և բարձր էին երևում. մի  
բուպէ կանգնեց և շունչ քաշելով պատրաստուում էր  
կրկին շարունակել այդ շարքաշ ու յոգնեցուցիչ ու-  
ղին. յանկարձ նա լսեց՝ ձիու խրխնջոց. ամբողջապէս  
լսողութիւն գարձած, աչքերը այն կողմն յառած  
կամենում էր մի բան նկատել սակայն անթափանձե-  
լի խաւարի միջից ոչինչ չէր նշմարուում: Սողալով  
մօտեցաւ մօտակայ մայրանների մեծ ու խիտ թփին,  
նստեց: Չին կարծես դիմամբ կրկին խրխնջաց և  
վանահօր սրասես աչքեր նկատեցին մի բանի ձի և  
միկնոյն ժամանակ լսուեց խօսակցութիւն:

Հեռոցհեաւ անձը գաղարեց. ամպերը ցրուեցին.  
վանահայրն այժմ՝ պարզ նկատեց, որ ինքը գանուած  
է վանքից բուական հեռու տարածութեան վրայ,  
իսկ այդանոց քարանձաւի մէջ թագնուածները աւա-  
զակ բրդեր էին:

Զգուշութեամբ թագնուեց նա խիտ մացանների  
մէջ և սպասեց մինչև քարանձաւից մէկիկ-մէկիկ  
գուրս եկան թևով չորս ուրուական, սրանցից ամեն  
մէկը բռնեց իւր ձիու երասանակը:

Վարդապետը լարեց իւր լսողութիւնը. իսկ  
ուրուականներից մէկը գարձաւ միւսներին ու տասց:

— Տղերք. այս գիշեր մենք այլ ևս ոչինչ չենք  
կարող անել, գառնանք օբաները. տեսնում էք, գիշե-  
րը գնալով ցերեկ է գառնում. այսպիսի պարզ գիշե-  
րին գիւղ մանել և ոչխար կամ տուար յափշտակելը  
աւելի քան անմտութիւն է:

— Ազրա, դու այսօր բարձրովին անձանաչելի մէկն ես դարձել. սրտեղից քո մէջ այդչափ զգուշութիւն և վախ. դեաւուրներից զգուշանալ վախենալ, քեզից բնաւ չէի սպասում:

— Հը՛մ մոնչաց Ազրան.— այժմ դեաւուրն էլ քիւրդից պակաս չէ. այժմ նրանց մէջն էլ շնո-շնո կան քիւրդից էլ աւելի քան և անվախ կարիճներ:

Ի՞նչ ունիք ասելու Մ. գեղցի կարիճ Սագօյի մասին:

— Էդ Սագօն սխալմամբ հայ է եղած. նա կարծես քիւրդի սերունդ է. Ազրա, երևի քո սիրար վաս բան է գուշակում. թող այս անգամ քո ասածը լինի:

Այս ասելով՝ նրանք նստան իրենց ձիերին և զիմեցին գէպի արևելեան լեռնաբլուրը:

Քրդերի հեռանալուց յետոյ միայն իւր թագստի սեղից դուրս եկաւ վարդապետը, «Օրհնեալ լինես դու Սագօ. քո մէկ անունը այդ աւագակների մէջ սարսափ է գցել» ասաց և իւր քայլերը ուղղեց գէպի մենաստան:

Կէս զիշերը անց էր, երբ նա յոգնած զարկացած հազիւ հազ մօտեցաւ վանքի պարխազներին և ձեռքի երկաթեայ դաւաղանովը երեք անգամ խփեց դռան ու արտասանեց պայմանանշանի բառերը: Դռնապանը բաց արաւ ու անսնելով վանահօրը ասաց.

— Հայր սուրբ. Սերոբը և Վարդանը գնացին ձեզ որոնելու, իսկ Զաքին և Ղևոնդը վանքում են:

Վարդապետը լուռ ու մտախօս անցաւ և զլիմեց գէպի իւր բնակարանը:

V.

Յունիս ամիսն էր. զիւրացիք սկսել էին հնձել և հաւաքել խոտը, անասունների ձմեռուայ պաշարը: Արանը աճել-բարձրացել էին և սեղ-սեղ գարին սկսել էր ցողունից զլուխը դուրս ձգել, իսկ ցորենը դեռ կանանչ արօտի նման թեթե քամուց, արմատի վրայ տարուբերում էր ինչպէս ծովի ալիքները:

Պարզ ամառնային եղանակը, գովացուցիչ գեփիււրը, նոր կեանք ու եռանդ էր ներշնչում աշխարհին. թռչուններն իրենց ճուտողիւճով զմայլեցնում էին մարդկանց. այդպիսի բարեշաջող եղանակին՝ Մ. զիւրի աշխատանքի ընդունակ անդամները դուրս էին եկել դաշտում գործելու:

Մի գեղեցիկ և պայծառ առաւօտ, երբ դեռ արեգակը նոր էր ծագել և իւր սքանչելի լոյսը տարածել լեռնաբլուրների վրայ, Գէորդ աղան հրամայեց իւր ծառաներին, որ գնան կալուածքում աշխատեն իսկ ինքը նստեց իւր ձին և ուղևորուեց գէպի քաղաք: Նրա հեռանալուց քառորդ ժամ չանցած Աշխէնը վազեց եկաւ, մտաւ Գէորդ աղայի բակը, սրտեղ Ասաղիկը այդ միջոցին կանգնած հայում էր ձտերին, սրանք ցորենի հատիկները իրանց փոքրիկ կտուցներով հաւաքում էին, մօտեցաւ նրան և ասաց.

— Բարի ընչա Ասաղիկ ջան, ես շապում եմ. այս բոլէխ հայրիկիս հետ գնում ենք դաշտ. եկայ քեզ մօտ շատ կարևոր բան ունիմ քեզ ասելու միայն այն ասա. եթէ քեզ համար ասելիքս հաճելի լինի ինձ ի՞նչ պարգև կտաս:

— Նախ դու ասա քո ասելիքդ, եթէ սրտիս մօտիկ բան լինի այն ժամանակ քեզ կասիմ թէ՛ ի՞նչ պարգև պիտի ստանաս ինձանից:

— Օ՛, որ այդպէս է ես տարա, համոզուած եմ քո սրտին շատ մօտ է և դու գոհ կմնաս: Լսիր անցեալ օր ճաշից յետոյ գնացել էի աղբիւր, յանկարծ նա, Սազօն առաջս կտրեց և հարցրեց քո մասին. խեղճ աղայ ամեն անգամ քո անունը արտասանելիս խոր հուզոց էր արձակում. նրան այդ դրութեան մէջ տեսնելիս. ճիշտն ասած, խիղճս սաստիկ տանջում էր ինձ. ինչո՞վ կարող էի օգնել կամ մխիթարել նրան. ես պատասխանեցի թէ՛ քո հայրը արգելում է քեզ աղբիւր գնալու: Նրա լեզուի տակ կարծես մի ի՞նչոր ծածուկ բան կար. ես այդ նկատեցի, սակայն կարծես քաշուում էր արտասանելուց: Վերջապէս, երևի այլ ևս անկարող լինելով համբերելու, ասաց. «Օրիորդ, ձեզնից դատանիք չէ այն, որ ես հուզոյս ամենայն խորութեամբը սիրում եմ Աստղիկին. ո՛չ մի դո՛հաբերութեան առաջ կանգ չեմ առնի, զէթ մի անգամ տեսնէի նրան սիրտս բաց անէի նրա առաջ, յայտնէի սրտիս սիրոյ զգացմունքը:

Ես այսօր գնում եմ գործով և կը վերադառնամ միայն երեք օրից, այսինքն հինգշաբթի. խնդրում եմ ձեզ օրիորդ, յիշեցէք Աստղիկին և խնդրեցէք իմ կողմից, որ հինգշաբթի զիշեր, իրենց պարտիզում, ժամադիր լինի ինձ»: Դու Աստղիկ ջան այնքան էլ անգութ և անխիղճ աղջիկ չես, այդ ես լաւ գիտեմ. իսկ իմ մասին կարող ես վստահ լինել. հօ գիտես ինչ գաղանապահն եմ:

— Ինչէ՞ր ես խօսում Աշխէն. մի մտածիր. միթէ կարո՞ղ եմ այդպիսի անխտհեմ քայլ անել. դու գիտես, որ նախ հայ աղջկայ համար ներելի բան չէ գիշերով ժամադիր լինել օտար մի աղայի հետ. երկրորդ իմ ծնօղները չափազանց խիստ են իմ նկատմամբ. ո՛չ... ո՛չ նրանք եթէ իմանան ինձ կը սպանեն...:

— Դու գիտես. այսօր հինգշաբթի է, ես չեմ ուշացել. ես իմ պարտքս կատարեցի. զէ՛հ ես շտապում եմ, հայրս ինձ է սպասում. բայց կրկին անգամ ասում եմ, մի սպանիր Սազօյին. ախտս է նա մէկ հատիկն է մեր զիւղում. ազնիւ, խելօք և քաջ: Դէ՛հ, մնաս բարեա՛ւ ասաց ու հեռացաւ:

Աստղիկը անշարժ-քարացած կանգնել էր, այդ տեսակնկալ լուրը առիթ եղաւ մի անգամ ևս բռնն դօրութեամբ ալէկոծել նրա սիրոյ սիրաբ. նա յիշեց այնօրը երբ առաջին անգամ տեսաւ Սազօյին. յիշեց անցկացրած անքուն գիշերները, գառանցանքները. սերը, որ ամօժում էր զէպի այդ երիտասարդը. այսօրից, նա էլ սիրոյ կարօտով էր սպրում ու տանջւում: Անգիտակցաբար Աստղիկը շրթունքները արտասանում էին Սազօյի անունը. Սազօն ինձ սիրում է. նա ձգտում է տեսնել ինձ, խնդրել է ժամադիր լինել մեր պարտիզումը. իսկ ե՛ս, ես մերժեցի. ինչո՞ւ, ինքս էլ չգիտեմ. չէ՞ որ ես էլ եմ զգում, որ սիրում եմ նրան, իմ մէջն էլ նոյն բռնն ցանկութիւնն է, պատահելու և խօսելու նրա հետ: Ո՞վ գիտէ, գուցէ Աշխէնը նորից հանգիպի նրան և ասի «Մերժեց» . խեղճ աղա. սրբան պիտի տանջուի մերժեցի, բայց սիրտս փափագում է տեսնել նրան:

Չէ, ինչ որ էլ լինի, դուրս կը գամ պարտէզ. մանուսնդ հայրիկս էլ տանը չէ:

Այս և նման մտածողութիւններով Աստղիկը հագիւ անցկացրեց այդ օրը. և նրա համար այդ օրը ամսի չափ երկար թուաց:

Բաւական ուշ գիշեր էր, երբ Աստղիկը համոզուեց, որ մայրը քնած է, մտաւ պարտէզ, իսկ սի-

րոյ զգացմունքի առաջ խոնարհուեց թէ վախը և թէ հոյ աղջկայ ամօթխածութիւնը:

Սագօն սրտատրուի վաղուց արդէն սպասում էր այնտեղ: Հնչեց ցանկացեալ ժամը. և այնտեղ դարաւոր կաղնիներէ մօտ, երկու սիրահարներ առաջին անգամ զրկախառնուեցին. առաջին անգամ նրանց հրատապ շրթունքները հանդիպեցին իրարու երգուելով հուստատրիմ մնալ միմիանց մինչև յաւիտեան:

VI.

Բալօյինց Գէորգ աղան Մ. զիւզի առաջնակարգ հարուստներէրց մէկն էր. ունէր սեփական արօտատեղի, կտրուածք, հազարներով ոչխարներ, ձիերի երամակներ, կովեր, եզներ, գոմէշներ և մօտ քսան հոգի ծառաներ:

Նա իւր քարաշէն մեծ տան շինութիւնը վերջացրել էր. այդ տունը զիւզի մէջ առաջին տեղն էր բռնում թէ մեծութեամբը և թէ ճարտարապետութեամբը. բայց և այնպէս, իւր կնօջ Համաափիւսի հետ, բնակում էր հին տան մէջ:

Երբ ծնուեց Աստղիկը նրանք տեղափոխուեցին նոր շինութեան մէջ: Թէև Գէորգ աղան առ հասարակ հակառակ էր աղջիկ-զաւակ ծնուելուն՝ բայց ինչ արած, նրա երկու որդիքը, արու զաւակները, զրեթէ միաժամանակ մէկը միւսի յեանից մեռան: Սուսի շատ անգամ ինքն իրան մխիթարելով ասում էր «թէև աղջիկ բայց էլի ժառանգ զաւակ է»:

Փոքրիկ Աստղիկը տարիների ընթացքում մեծացաւ, սիրունացաւ, իւր մօր խնամքովը հեռոհեռ սովորեց այն անհրաժեշտ բաները, որ ամեն մի տան

մէջ կնկայ պարտականութիւնն է. փոշիները մաքրել, կեղտերը սրբել, բացի այդ կարգին սովորեց խոհարարութիւնը. և եթէ այդ ամենի վրայ աւելացնենք տէրտէրակնօջ տուած ուսումը, այն ժամանակ արդարև Աստղիկին կարելի էր հաշուել կատարեալ հասունացած մի օրիորդի. և այդ էր պատճառը, որ տիկին Համաափիւսը շատ անգամ պարծենալով ասում էր:

— Աստղիկիս այսօր էլ ամուսնացնեմ, մարդի տամ, երեսս չի կարմրի. ամեն բան գիտէ. նոյն իսկ երկու երեխայ ունեցող հարսից էլ աւելի բան գիտէ:

Իսկ Գէորգ աղան մաքումը զանազան ծրարիւններ էր կազմում. սրովհետև բացի Աստղիկից նա ուրիշ զաւակ չունէր, ուստի կամայ-ականայ իւր բուր ստացուածքը պիտի ժառանգէր աղջիկը, հեռապէս և նրա ամուսինը:

Այդ միտքն էր մաշեցնում նրա ուղեղը, նա սատարիկ փափագում էր օր առաջ գիտնալ ո՞վ է լինելու իւր փեսան, Աստղիկի մարդը: Եթէ Պօղոս աղայի աղայ Սեդրակն է, վատ չէ. ասում են, խելօք, գործունեայ մէկն է և կարգին ծնօղների զաւակ: Եթէ աղջկաս պսակեմ Սեդրակի հետ, այն ժամանակ ամեն ինչ կը յանձնեմ նրան. թող կառավարէ. իսկ ես կը քաշուիմ գործից և հանգիստ կանցկացնեմ կեանքիս մնացած օրերը: Ի՞նչ էլ լինի պէտք է այդ գործը զուլի բերել. ես յիշում եմ երբ մի անգամ Պօղոս աղան խընձոյքի ժամանակ ինձ խնամի Գէորգ էր անուանում. ես էլ պատասխանեցի «եթէ աստուած կամենայ ամեն ինչ կը իրականանայ»:

Այս բոլոր մտածողութեանց հետևանքը այն եղաւ, որ Գէորգ աղան վճուեց զիւզի քահանային և հէնց միւս օրն էլ առանց արտաձգելու, այցելեց Տէր-Մարկոսին:

Քահանան Գէորգ աղայի անակնկալ այցելութիւնը պատահականի վերագրեց:

— Օրհնեա ի տէր, ասաց աղան:

— Առատեա՞ծ օրհնէ, պատասխանեց տէրաւորը, և խնդրեց նստել բազմոցի վրայ:

Սովորական հարց ու փորձեց յետոյ Գէորգ աղան գիմեց տէր հօրը:

— Տէր-Հայր, Ձեզ մօտ խոստովանութիւն ունիմ, եկել եմ խորհրդակցելու, դուք գիտէք, որ ես բացի իմ մինուճար Ասաղիկիցս ուրիշ գաւակ չունիմ. իմ բարձր սննեցած կարողութիւնս պիտի անցնի իբրև ժառանգութիւն աղջկաս և փեսայ: Սակայն ցաւալին այն է, որ ինձ դեռ յայտնի չէ, ո՞վ է լինելու իմ ապագայ փեսան, այդ միտքը ինձ չափազանց անհանգստացնում է. վճռեցի գիմել ձեզ և խնդրել, միտին այդ մասին խորհրդակցելու: Եթէ մէկը կ'սոյ, որ կարող է իւր բարի խրատներով ինձ օգնել, այդ միմիայն դուք էք, տէր-հայր:

— Խնդրեմ ասէք, ինչո՞վ կարող եմ օգտակար լինել ձեզ. եթէ ինձնից մի բան կ'ախուճն ունի, ես պատրաստ եմ «հովիւ քաջ գանձն իւր գնէ ի վերայ ոչխարաց»:

— Ահա թէ ինչով. ձեզ աւելի բան յայտնի է, ո՞վ կայ մեր գիւղի երիտասարդներից, որը եթէ աղջկաս ուզելու լինի, չ'մերժեմ:

— Կան, ի հարկէ, օրինակ Սարգիս ապեր որդի Մուշեղը, Պօղոս աղայի աղա Սեդրակը վերջապէս վանեցի Համօյի աղա Գուրգենը, եթէ գրանից մէկն ու մէկը ուզելու լինի ինչո՞ւ մերժել:

— Հա, պարզ բան է, եթէ Պօղոս աղայի որդին ուզի աղջկաս առանց տատանելու ուրախութեամբ

կը համաձայնիմ... և գիտէք տէր-հայր մի բան էլ կայ, դեռ անցեալ ամառ, գուցէ դուք յիշում էք, Վարդավառի ածինն էր, խնձոցի ժամանակ, որանց դուք էլ, Սահակ հայր Սուրբն էլ, ներկայ էիք, Պօղոս աղան ինձ խնամի Գէորգ էր ասում և իւր որդու համար Ասաղիկին յիշում. ես էլ իմ կողմից շատ եմ հաւանել այդ Սեդրակին. ինչ լաւ կը լինէր...

— Որ այդպէս է դուք հանգիստ կարող էք մնալ ես միշտ լինում եմ Պօղոս աղայի մօտ վաղը նոյնպէս դնալու եմ, խօսակցութեան միջոցին ի միջի պարտէզները բաց կ'անիմ, և կաշխատեմ նրա մտադրութիւնը ըմբռնել. եթէ ինձ հարցնելու լինի թէ՛ ում աղջիկը յարմար է իւր որդու կնութեան համար, ես գիտեմ ինչ ասելու:

Գէորգ աղայի ուրախութիւնը անսահման էր: Վերկացաւ նստած տեղիցը, մօտեցաւ տէրաւորին և իւր խորին շնորհակալութիւնը յայտնելով, խօստացաւ շուտով գալ ու յետևանքի մասին տեղեկանալու և հեռացաւ:

VIII.

Երեկոյ էր. արեգակի վերջին ճառագայթները սփռուել էին Մ. գիւղի արևելեան սարահարթի գլխին, որի ստորոտում, փոքրիկ ճանապարհի վրայ, երևաց մի ձիաւոր:

Նա հագուած էր տեղական տարազով, Ղարաբաղի սևագոյն նժոյգը տակին, գանգաղ վերադառնում էր գէպի գիւղ:

Ձին կարծես նեղանում էր տիրօջից, որը գսպում էր սանձը և թոյլ չէր տալիս նրան խաղալ — թռչկոտել. իսկ ինքը ձիաւորը խորատուգուած, մի ինչ որ

բանի մասին լուրջ մտածում էր: Կն վերագառնում էր սահմանազլխից, իրեն յանձնուած դժուարին գործը աջող կատարելուց յետոյ, զսն սրտով դիմում էր զէպի իւր հայրենական գիւղը:

Բաւական ժամանակ էր, ինչ նա ոչինչ չէր կերել. ցած իջաւ ձիուց, բաց թողեց նրան մարգագետնի վերայ արածելու, ապա քակից խուրջինի բերանը, հանեց հաց ու բանիր, մի քիչ կերաւ և ետփունջէն փռեց կանաչ խօտերի վրայ ու տարածուեց: Շատ մտածելուց նրա ուղեղը թմրեց և աչքերը փակուեցին:

Երբ բաւական կազուրուած նա դարձնեց, նկատեց, որ արեգակը արդէն մայր էր մտել, ու խօսոյն թամբեց իւր ձին, նստաւ և դիմեց զէպի գիւղ:

Ճանապարհին նա մտածում էր իւր վարած կեանքի մասին և ինքնիրեն տտում:

«Թէպէտ ես այս անգաստական կեանքը սիրում եմ, դա ինձ համար ասպետական կեանք է, սակայն մեր զիւղացիք շատ տարբեր կարծիք ունին իմ մասին:

Որքան զբարտաւթիւն, որքան բամբասանք, և զարմանալին այն է, որ իմ ներկայութեամբ ոչ ոք դէս համարձակութիւն չի ունեցել այգպիսի նկատողութիւններ անելու, այն ինչ իմ ձերուսի խեղճ հօրս երեսն ի վեր գանազան անախորժ և ծնողական սիրտը մորմորող խօսքեր են առում իմ հասցէին:

Այն, շատ քչերն են ինձ համակրում, չգիտեմ ինչո՞ւ իմ զէմ լարուած և գինուած են շատերը: Չէ՞ որ քանի, բանի անգամ օգտակար ծառայութիւններ եմ արել մեր գիւղին և հասարակութեան, ուրեմն այդ ամենը մոռացուած է: Արդարև միայն իմ ընկերներն

ընցս մի քանիսը մնացել են ինձ հաւատարիմ և մէկն էլ իմ սրտի հասար Բայօյենց Գէորգի աղջիկը: Օ՛, տէր Աստուած, ինչպէս սիրաս սաստիկ զարկում է կրծքիս մէջ. այն, Աստղիկն էլ ինձ սիրում է, սիրում է ամենաանկեղծ սիրով, ես յիշում եմ, երբ մենք երկուսով կանգնած կաղնիների մօտ, նա ձեռքս ամուր բռնեց և արտասուքը աչքերին արտասանեց. «Սագօ ջան, ես սիրում եմ քեզ... սիրում եմ բոլոր էութեամբս... մի մոռանար և դու քո Աստղիկին»: Է՛հ, ոչինչ, թող ուրիշները ինչ ուզեն ասեն, գէթ իմ Աստղիկն ինձ հասնի: Ես պատրաստ եմ ամեն զրկանք, հալածանք տանելու: Բայց մի բան միայն ինձ անհանգստացնում է—այն է, որ Բայօյենց Գէորգը հարուստ մարդ է, արդեօք կը համաձայնի մինուձար աղջկան ինձ տալու: Ահաւասիկ այդ միտքն է չորս ամիս շարունակ տանջում իմ ուղեղը: Իսկ եթէ մերժի—ո՛հ, այն ժամանակ թող միտքի արեգակը, թող կործանուի այս անարգար աշխարհը: Բայց և այնպէս այս երեկոյ անպատճառ պէտք է տեսնեմ Աստղիկին. չորս ամիս է տանջում ենք... և ես ոչ մի զրական, որոշ բան չեմ տեսնում. չորս ամիս է մեր սրտերը անհանգիստ են. պէտք է աշխատել մի կերպ վերջ տալ այս դժուար կացութեանը և պէտք է յայտնեմ իմ որոշումը. եթէ Աստղիկը համաձայնի ծրագրիս, այն ժամանակ մենք փրկուած ենք:

Այսպէս մտածելով ձիաւորն, որ մեր հերոս Սալօն էր, չէր նկատած, թէ ինչպէս արդէն գտնուում էր գիւղի փողոցներից մէկում, հէնց Պօղոս աղայի տան մօտ:

Քնից սթափուածի նման՝ շահուեց թամբի վրայ և ձին խաղացնելով հասաւ մտաւ իրենց տան բակը:

Նա ցած իջաւ ձիուց, կապեց նրան և գարին առաջը լեցնելով ասաց.

— Սիրուն Արծուիկ, մինչև ես հօրս տեսնեմ և հետը խօսեմ, դու էլ դարին կուտես կը վերջացնես և ապա կորոշենք մեր սպազայ անելիքը — այս ասելով մտաւ խրճիթ:

Այնտեղ մութ էր, ոչ ձայն, ոչ էլ կենդանութեան նշոյլ: Սագօն ձայն տուեց:

— Հայրիկ, քնած հօ չե՞ս:

— Սագօ ջան, այդ դժու ես, չէ քնած չեմ, քունը աչքերիս մօտ չի գալիս. միշտ քո մասին եմ մտածում, քեզ համար աղօթում. ախր ինչո՞ւ ուշացար — ասաց մի խռպոտ ձայն խրճիթի անկիւնից և լսեց:

Սագօն այդ միջոցին ճրագը վառեց, սրի ազատ լոյսը կիսով չափ լուսաւորեց խրճիթի ներքը: Այնտեղ, անկիւնում, հնամաշ փայտաների վրայ թիկը տուած ընկած էր ծերունի Կապօյենց Մարկոսը — Սագօյի հայրը: Ես հազաց և կպցրեց չիբուխը ու սկսեց ծխել. հօր աջ կողմին, ծալապատիկ նստեց սրբին. երկուսն էլ լուռ էին... վերջապէս հայրը դարձաւ սրբուն ու ասաց.

— Որդեակ, դու տեսնում ես, թէ ինչպէս մեր ընտանեկան դրութիւնը գնալով աւելի ու աւելի աննախանձելի է դառնում. մօրդ մահից յետոյ, մեր օջախը կարօտ է խօնեմ ասնախկնտ խնամքի — վարձուկանայք երբէք այն չեն կարող անել, ինչ որ հարագատ ասնախկինն է անում: Ես բոլորովին ծերայել, մի սաս գրեթէ գերեզմանիս է հասել և իմ միակ ցանկութիւնն է՝ տեսնել քո պսակը, ունենալ այս յարկի տակ մի հարս, այնուհետև մեռնեմ էլ հագս չէ. հանգիստ սրտով կը հեռանամ, հաւատալով, որ Կապօյենց տան օջախը շատ շատ տարիներ դեռ վառ կը մնայ... ես իմ աղօթքների մէջ միշտ ազգաչում եմ

Աստուծուն, որ երկարացնի իմ կեանքի մնացած օրերը, մինչև տեսնեմ քո պսակը: Գիտեմ դու աշխատաւոր ազատ ես, փողի-ապրուստի և այլ անհրաժեշտ բաների կարօտութիւն մինչև օրս չես ունեցած, միակ իմ սրտի ցանկութիւնը և իղձս եղել է, ինչպէս ասացի, շուտով տեսնել քո պսակը: Արի՛ դաւակոս, լսիր քո հօր խօսքերին, մեր հարեան Պետօյի աղջկան ուղենք քեզ հարսնացու: Հեղինէն ասում է լաւ, խոհեմ և ամօթխած աղջիկ է. թէ չէ, Բալօյենց Գէորգը քեզ աղջիկ տուողը չէ:

Հը՞, ինչ ես մտածում... պատասխանիր է:

— Ձէ, հայրիկ, ես մէկ անգամ ընդ միշտ տեսի եմ, եթէ ինձ վիճակուած է ամուսնանալ, միայն Բալօյենց Գէորգի աղջկայ հետ կարող եմ պսակուել:

Ծերուկը լուռ էր. լուռ էր և Սագօն: Ով գիտէ այդ սպանիչ դրութիւնը սրբան ևս տեսէր, եթէ վերջինս սրտած չը լինէր այդ երեկոյ Սապօյիկին տեսնելու: Վերկացաւ, դուրս եկաւ խրճիթից, նստաւ ձին և անյայտացու մթութեան մէջ:

VIII.

Բալօյենց Գէորգի տան բակը և պարտէզը բաւական ընդարձակ տեղ էր բոնում. պարտիզում բուսած էին զանազան պտղատու ծառեր, վարդենիներ և մեխակներ. այնտեղ՝ արեւելեան պարսօլի մօտ, դեռ շատ հին ժամանակներից կանդնած կային երկու իրարու մօտիկ բարձր և հաստ կաղնիներ:

Այդ կաղնիների շուրջը խնամքով անկուած էին վարդի թփեր, սրտնց տերեւների վրայ բացուած գեղեցկագոյն վարդերի մօտ՝ ամեն առաւօտ քաղցրա-

ձայն երգում էին սոխակները: Պարաէզը և հինա-  
ւուրց կաղնիները շատ դէպքերի անխօս վիճակներ էին:  
Այժմ էլ շատ անգամ Աստղիկը դալիս էր, նստում և  
զմայլելով նայում այդ բացուած ու կական վարդերին,  
սրտնոց գոյնից պակաս չէր իւր թշերի և շրթունքների  
կարմրութիւնը:

Նա յիշում էր, թէ ինչպէս ինքը և Սաղօն շատ  
շատ զիշերներ լուսացրել են միասին այդ վարդերով  
ըրջապատուած կաղնիները մօտ. այդ օրն ևս, երբ  
հայրը գնացել էր տէր Մարկոսի մօտ, Աստղիկը դար-  
ձեալ պարտիզօւմն էր: Երբ Գէորգ ազան վերադար-  
ձաւ՝ նկատեց աղջկան ու կանչեց իւր մօտ:

— Աստղիկ ջան, եկ այստեղ, քեզ բան ունեմ  
տեսլու:

— Իսկոյն հայրիկ, — պատասխանեց աղջիկը և  
զիմեց դէպի հօր սենեակը, սակայն մայրը կանչեց  
նրան խոհանոց և հրամայեց հսկել կաթսայի մէջ  
եղած կաթին, որ դրած էր կրակի վրայ եռալու. այն-  
պէս որ իսկոյն և եթ չը կարողացաւ զնալ հօր մօտ, և  
աշխատում էր գուշակել հօր ասելիքը:

Գէորգ ազան վճռեց ամեն ինչ յայտնել կնոջը,  
ինքն իրեն տեսլով՝ Համասիլուոյ ծածկել չի կարելի,  
չէ՞ որ նա էլ մայր է, նա նոյնպէս պէտք է ծանօթ  
լինի իմ ծրագրին Աստղիկի նկատմամբ:

Մտքերի մէջ խորասուզուած ծալապատիկ նստած  
բրդէ «մինդարի» վրայ՝ մեքենանաբար իւր մտաներովը  
բաշում էր սաթի տէր սղորմեայի խոշոր հատիկներն,  
երբ ներս մտաւ կինը:

Գէորգ ազան վարձաւ կնոջը և հարցրեց.

— Ո՞ւր է Աստղիկը, ես նրան կանչեցի, ինչո՞ւ  
չեկաւ:

— Խոհանոցում գործի եմ գրել. այսօր նա սո-  
վորականից աւելի շատ ուրախ արամադրութեան մէջ  
է կարծես. ամեն բան այնպէս ճշտութեամբ է կա-  
տարում, որ կը քննու գարմացած:

— Իսկի չեմ գարմանում — ասաց Գէորգ ազան  
և աւելացրեց — աղջիկս երեի նախագուշակում է, որ  
իւր բազը սկսել է ժպտալ, շուտով նշան կը գնենք  
Սեզրակի հետ և ապա կը պտակենք. մի քանի ամսից  
նրա տարիքը տասնը և վեցը կը լրանայ. և գիտե՞ս  
հարսանիքին ինչպիսի քէֆ եմ անելու:

— Ա՛յ մարդ, գլուխդ քարոյլ ես տալիս, գու-  
շը զիտես, որ մեր աղջիկը Սեզրակի անունն անգամ  
չի ուզում լսել: Որքան ինձ յայտնի է, նա կպել է,  
աւելին տեսմ, նոյն իսկ սիրահարուել է կապոյեհաց  
Սաղօյի վրայ: Այդ ինձ ասաց մեր հարեան Աբրահա-  
մի աղջիկը: Ես իհարկէ ծածկում էի քեզնից այդ  
բանը, ճիշդն ասած, վախենում էի քո բարկութիւ-  
նից:

Գէորգ ազան սպուշի նման չոտած աչքերով նա-  
յում էր կնոջ և իւր ականջներին չէր հաւատում:  
Բարկութիւնից երեսի գոյնը մէկ կարմրում էր մէկ  
զեզնում: Բոպէական շփոթութիւնից սթափուելով:

— Եթէ քո խօսքերը ճիշտ են, պոսաց — այն ժա-  
մանակ այդ լիբը աղջկան իմ այս ձեռներովս կը  
խեղդեմ, էլ չեմ նայի, որ նա մինուճար է. նա է,  
թող նա էլ չը լինի: Այս բոպէիս գնա, այդ անաքան-  
զին ուղարկիր ինձ մօտ:

Կինը երբ հեռացաւ, մարդը բարկութիւնից ա-  
տաճնեցով կրծոտում էր իւր ձեռքի մտաների եզունդ-  
ները. դա նրա սաստիկ բարկանալու նշանն էր:

Նա սկսեց անցուկորձ անել սենեակում: Կինը կրկին վերադարձաւ և յայանեց, որ Աստղիկը սաստիկ զբազուած է և երբ ձեռքի գործը վերջացնէ՝ անմիջապէս կուզարկի:

Սակայն իրողութիւնը այլ էր: Մայրը թէ խոհանոցում և թէ միւս սենեակներում չը գտնելով աղջկան և սրպէս զի երկար սպասել տալով մարդի բարկութիւնը ևս աւելի չը սաստկանէ՝ հնարեց այդ սուտը, յուսալով՝ որ Աստղիկը ուր որ է կը գայ:

Սակայն իսկապէս տաած՝ այդ բոպէին Աստղիկը գտնուում էր պարտիզում, այնտեղ նա և Սաղօն տաբուած էին իրենց սիրային զգացմունքներով. Սաղօն ասում էր:

— Աստղիկ, հոգեակս, մեզ մնում է միայն մի միջոց— փախչել միասին... Ընչ անենք, հայրդ ինձ չի սիրում, յօժար կամքով նա ինձ աղջիկ տուտղը չէ, նա սեղում է հարուստ փեսացու, իսկ ես այդ հարստութիւնը չունեմ, հետևապէս այդ հանդամանքը խոչնդոտ պէտք է հանդիսանայ մեր ամուսնութեանը. այդ բանում ես աւելի քան համոզուած եմ: Եթէ գուինձ սիրում ես, համաձայնութիւն իմ առաջարկութեանը, և հէնց այս զիշեր մենք քեզ հետ կը թողնենք այս անտրդար զիւղը և կը գնանք մի այնպիսի տեղ, ուր ապահով կարող կը լինենք անցկացնել մեր օրերը: Մեր աղագայ բազաւերութիւնը մեզ ստիպում է այգպէս վարուել, աղա թէ ոչ՝ մեզ իրարից կը բաժանեն յաւիտեան:

— Չէ, Սաղօ ջան, ես երբէք ուրիշի կինը չեմ լինի: Մայրիկս մի քանի անգամ հանարի ձեռք տաւում էր, թէ Պօղոս աղայի աղա Սեդրակը լաւ աղամարդ է, եթէ քեզ ուզի դու բազաւոր կը լինես: Բայց ես,

Սաղօ ջան, սիրել եմ քեզ, սիրում եմ իմ բոլոր հոգու խորութեամբը— թէկուզ երկինք-գետինը իրարու խառնուին, ես քոնն եմ և կը մնամ յաւիտեան: Ո՛չ որ չի կարող մեզ բաժանել իրարուց. միայն, ի սէր ասուծոյ, մտադրութիւնդ թող վաղուան. էգուց ես պատրաստ եմ, էգուց կէս գիշերին:

Հէնց այն բոպէին երբ մայրը ամեն տեղ սրննելով և չը գտնելով աղջկան մի քանի անգամ ձայն տալով բզաւեց՝ «Աստղիկ... Աստղիկ», այդ ձայնից սթափուեցին Սաղօն և Աստղիկը, վերջինս ճանաչելով մօր ձայնը ասաց.

— Ինձ կանչում են, ես գնում եմ, իսկ դու, Սաղօ ջան, վաղը երեկոյ եկ գարձեալ այստեղ, ես կը սպասեմ և այն ժամանակ միասին կը խորհրդակցենք մնացեալի մասին:

Այս ասելով համբուրուեցին և բաժանուեցին իրարուց:

Տիկին Համասթիւնը երբ նկատեց աղջկան կէս ուրախ— կէս բարկութեամբ, հարցրեց:

— Ա՛յ աղջիկ, ո՛ւր ես կ'ըրել. անա կէս ժամ է քեզ եմ ման գալիս, և չեմ կարողանում գտնել, ո՛ւր էիր գնացել այս մութ գիշերին:

— Մայրիկ ջան, մի բարկանար այսօր երեկոյնից զլուխ սաստիկ ցաւում էր, մտայ պարտէզ, որ մի քիչ թարմ օդ բաշեմ. այնտեղ վարդերի մօտ, արօսները վրայ տարածուեցին. ինքս էլ չեմ նկատած թէ՛ ինչպէս քնել-մնացել եմ. Օ՛, մայրիկ ջան, եթէ զիտենայիր, որքան հաճելի էր ինձ կանաչ արօսները վրայ բնիլը... բազր երազները աշխարհումս էի. . իսկ դու քո ազմուկով ինձ արթնացրիր և զրկեցիր ինձ անուշ քնիցս:

— Զարմանում եմ, դու արդէն հարսնացու մի աղջիկ ես և դեռ երեխայի խելք ես բանեցնում. քո տարիքի աղջկան ներելի՞ բան է զիշերով մանել պարտէզ և մէն մենակ ախտեղ քնել: Դա քո կողմից մեծ անխոհեմութիւն է. գիտես, եթէ հայրիկդ իմանայ, սրբան պիտի բարկանայ. նա մանաւանդ այսօր առանց այդէլ շատ բարկացած է: Գնայ հայրիկիդ մօտ, նա քեզ վաղուց է սպասում:

Աստղիկը մտաւ հօր սենեակ, և ձեռները խաշած և կանգնեց դռան մօտ:

Գէորգ ազան զուլսը կախած նստած էր և կարծես մի ինչ որ լուրջ բանի մասին էր մտածում. երբ նկատեց աղջկան, աշխատեց ինքն իրեն զսպել և մեղմ ձայնով ասաց.

— Աղջիկս, ես քեզ համար գիշեր-ցերեկ աշխատում եմ, հոգս եմ քաշում, սրպէս գի շուտով պատկեմ, մարդի տամ, քո բաղդաւորութիւնը իմ աչքերովս տեսնեմ, իսկ դու դեռ երեխայութիւնից ձեռ չես վեր առնում. մի ժամ է սպասում եմ քեզ... է՛հ, ինչ որ է... վնաս չունի. երբ հարս կանենք և Սեղբակի նման սղամարդի հետ կը պսակենք, այն ժամանակ այլ ևս երեխայութիւն չես անի.. հը՞, ինչո՞ւ երեսիդ ունդը փոխուեց. թէ՞ լայնախ չես անի այդպէս հարուստ երիտասարդին, որը զիւզի մէջ եղածներից առաջինն է... դէ՛հ պատասխանիր... հօ վատ փեսացու չեմ ընտրած քեզ համար:

Աստղիկը լուռ էր. նա տատանւում էր, չը գիտէր ինչ պատասխանէր... եթէ ասէր թէ՛ Սեղբակին չի ուզում—հայրը ստատիկ պիտի բարկանար. ուստի ոչինչ չը պատասխանեց:

Գէորգ ազան շարունակ կրկնում էր իւր հարցը

այդ միջոցին ներս մտաւ կինը-Աստղիկի մայրը: Մօր ներկայութիւնը կարծես համաձարկութիւն ներշնչեց աղջկան և նա պատասխանեց.

— Հայրիկ, իմ երեխայութիւնից սկսած՝ թէ քո և թէ մայրիկիս ծնողական հրամանը միշտ էլ ինձ համար եղել է սրբութիւն, իսկ ձեր կամքը՝ պատգամ... փոքր հասակիցս մինչև այսօր սիրել եմ և պաշտել ձեզ. այդ դուք էլ շատ լաւ գիտէք: Այժմ աղաչում եմ ձեզ մի ստիպէք ինձ ամուսնանալու, մանաւանդ ես չեմ կամենում Սեղբակի կինը դառնալ... գիտեմ, գիւղական կամենում վայել չէ այսպէս ազատ համարձակ ցի հայ աղջկան վայել չէ այսպէս ազատ համարձակ խօսել ծնողների առաջ, սակայն այն էլ գիտեմ, որ ծնողներին էլ ներելի չէ իրենց աղջիկներին հետ ծնողներին էլ ներելի չէ իրենց աղջիկներին: Վարուել այնպէս, ինչպէս անբան անասունների: Ես ունեմ իմ հարկացողութիւնը. ես սիրել եմ մէկին... Սաբօյին, և բացի նրանից՝ ոչ ոքի հետ չեմ ամուսնանայ: Ահա իմ վճիռը, իմ վերջնական պատասխանը:

Այժմ հրամայիր ինձ ընկնել ջուրը, խեղդուել— կը կատարեմ անպայման. հրամայիր նետուել կրակի բոցերի մէջ— կը նետուիմ. բայց այս էլ լաւ իմացիր, որ Սաբօյին թողած՝ Սեղբակի հետ չեմ պսակուի...

Աղջկայ յանդուզն պատասխանը կարծես հօր համար շանթ լինէր. կատողեց և բուռնցքները սեղմած՝ յարձակուեց պօռալով.

— Դ՞՞՞հ... համարձակում ես քո հօր կամքին հակառակ գնալ. չը գիտես, որ ես իմ ասածի, ատէր մարդ եմ—կասեմ և կը կատարեմ: Տես, ես քեզ այնպէս կակղացնեմ, որ բամբակից էլ փափուկ լինես, սպասիր, քեզ այդ յանդուզնութիւնդ շատ թանկ կարսպասիր, քեզ այդ յանդուզնութիւնդ շատ թանկ կարսպասիր. իրբ աղջիկ գնա ժենայ. դէ՛հ, կորիր ասերախտ, լիբբ աղջիկ. գնա

թող քո ամօթը պատառոտէ քո անպատկառ սիրտը. .  
զնա մտածիր...

Աստղիկը արտասուքը աչքերին, հեկեկալով հեռա-  
ցաւ և քաշուեց իւր սենեակը, ծածկեց դուռը և սկսեց  
լալ-ողբալ աղիողորմ:

Կինը դառնալով մարդուն ասաց.

— Չարմանալի խասրակի տէր մարդ ես Գէորգ.  
Ի՞նչ է, քո խելքովը ուզում ես շանը գօռո՞վ որսի  
տանել. ես քեզ նախագգուշացրի, յայտնեցի, որ մեր  
աղջիկը ուրիշ հասարակ գեղջկուհիների նման չէ.  
մեզ նմաններին շուրը կը տանի և ծարաւ յետ կը  
բերի: Նա սիրել է Սագօյին, իսկ դու այժմ սալի-  
պում ես նրան Սեդրակի հետ ամուսնանալ:

— Ասա՛, քո այդ անպիտան լիրբ աղջիկը երբ  
է տեսել և սիրահարուել այն սրիկային, գող-աւա-  
զակ Կապօյէնց լաճին. ինչպէս է պատահել այդ:  
Եթէ դու խելօք և ուշիմ մայր լինէիր, աղջկագ լաւ  
կը պահէիր: Գնա այդ անզգամին խելքի բեր, և եթէ  
զարձեալ հակառակի, ես զիտեմ թէ ի՞նչ կանեմ:

Կինը վշտացած սրտով հեռացաւ և նրա յիշո-  
ղութեան մէջ ակամայ կենդանացաւ իւր անցեալ  
կեանքի քաղցր տպաւորութիւնը և դառն իրականու-  
թիւնը: Յիշեց, թէ ինչպէս մի ժամանակ ինքն էլ հաս-  
կացել էր և զգացել, թէ ի՞նչ է սէրը .. նա նոյնպէս  
ճաշակել էր սիրոյ քաղցր բաժակի ըմպելին... սիրել  
էր Գաբրիէլին, բայց ծնողները, հակառակ իւր կամ-  
քին, բռնի կերպով պսակեցին Գէորգի հետ, որին ոչ  
միայն չէր սիրում՝ այլ ատելով-ատում էր:

Այն օրուանից անցել էր զրեթէ երեսուն և երեք  
տարի. երեսուն երեք երկամր տարիներ. և նա համ-  
բերութեամբ տանում էր ամեն ինչ: Այդ մտածմունք-

ների և յիշողութիւնների մէջն էր, երբ յանկարծ  
Աստղիկը նետուեց մօր գիրկը և հեկեկալով աղեր-  
սում էր ասելով.

— Մայրիկ, ազատիր ինձ, մայրիկ, օգնիր ինձ.  
քո խեղճ ու կրակ աղջկան...

Խեղճ մայրը ինչ անէր— փոխանակ աղջկան մխի-  
թարելու, ինքն ևս սկսեց լալ ու հեկեկալ:

IX.

Առաւօտեան սովորականից վաղ Գէորգ աղան  
վերկացաւ անկողնից, դուրս եկաւ բակ և մտահոգ  
սկսեց զբօսնել. երևի գիշերը վատ էր անցկացրել:  
Նրա երեսի գոյնը բոլորովին գեղնած էր և աչքերը  
յոգնած:

Այդ միջոցին նրա մօտ եկաւ կինը և ասաց.

— Գէորգ, այսօր դու շուտ ես վերկացել, չը  
լինի բարկութիւնիցդ ամբողջ գիշերը անքուն ես  
անցկացրել. վատ բնաւորութիւն ունիս, այդ չափ  
թունդ լինելը լաւ բան չէ, Գէորգ ..:

— Այ կնիկ, ախր ո՞նց չը բարկանաս: Յանկարծ  
քո մէջքի զաւակը յանգգնի կամքիդ հակառակ գնալ,  
քո ծնողական իրաւունքներդ ոտնատակ անել, տես-  
նուած բան է: Սա մեր գիւղում ո՞ւմ աղջիկն է ինքը  
ճարել իւր փեսացուն: Իսկ այդ անաբանը մի բիշ  
սովորել է սէր սպիտակից շոկել, մի քանի ավեղ—  
ցփեղ զրեր կարգալ, ինքն իրեն մի մեծ բան է կար-  
ծում:

Յետոյ, ասա՛ տեսնեմ, ի՞նչ է ատում նա. նորից  
յամառո՞ւմ է, թէ՛ կակղեց:

— Գիշերս շատ լաց եղաւ: Ես նրան մխիթարե-

ցի, համոզեցի և նա վերջապէս ասաց՝ «ձեր գիտնալու բանն է... արէք ինչպէս կը կամենաք...»

Կինը այս խօսքերը դիտմամբ հնարեց, որ մարդի սիրտը շահի:

Արդարև, Գէորգ աղայի շարացած սիրտը հանգստացաւ և ասաց.

— Ես այդ նախատեսնում էի, հաւատացած էի, որ վերջ ի վերջոյ նա խելքի պիտի գայ ու հասկանայ, որ մենք նրա լաւն ենք կամենում: Այժմ ես տեղ ունիմ գնալու... բայց ո՛չ, դեռ վաղ է... յետոյ:

Նա յիշէց, որ այդ օրը պէտք է գնար տէր Մակոսի մօտ, սակայն ինքն իրեն զգում էր չափազանց յոգնած: Սրտի բարկութիւնից և մտատանջութիւնից չէր կարողացել զիշերը հանգիստ քնել: Նրա գէմքին մտիկ անողը կասէր—այդ մարդը կամ զժոխքից էր փախել, կամ գերեզմանից,

Գէորգ աղայի բնաւորութեան մէջ ինչ ասես կար—յամառութիւն, բռնակալութիւն, գոռոզութիւն, հպարտութիւն և այլն. այդ ամենի վրայ եթէ աւելացնենք նաև վախկոտութիւնը՝ այն ժամանակ կը ստացուի կատարեալ աղայի պատկերը իւր բոլոր գոյներով:

Հեռոջեալ շարացած սիրտը բոլորովին հանգստացաւ և նա կրկին սկսեց իւր զբօսանքը: Կրկին յիշեց տէր Մարկոսին, բայց չը գիտէր ինչ լուր պիտի ստանար. սակայն մեծ յոյս ունէր, որ իւր փեսացուն անպայման Սեդրակն էր լինելու:

Անցաւ զրեթէ մի ժամ. այլ ևս չէր կարող համբերել. զիմեց զէպի եկեղեցու կողմը, զէպի տէր Մարկոսի տունը:

Փողոցով գնալիս, ԲալօյենցԳէորգն այնպէս էր

խորասուզուել իւր ծրագիրները մէջ, կարծես նրա ուղեգում այդ բոպէին բացի Սեդրակից՝ ոչինչ, ոչինչ չը կար: Եկեղեցու պարսպին չը հասած, հակառակ կողմից նրա առաջ յանկարծ երևաց Սագօն: Խեղճ աղա, նա երբէք չէր սպասում, որ այդտեղ կը պատահի իւր սիրած ու փայփայած աղջկայ հօրը: Ամենայն ակնածութեամբ քաշուեց մի կողմ, ձեռքերը խաշած և պահեց, որ նշան էր յարգանքի: Օ՛, նա չը գիտէր, որ այդ մարդու սրտի ու մտքի մէջ այդ բոպէին ո՛չ Ասողիկն ունէր տեղ և ո՛չ էլ ինքը Սագօն:

Եւ երբ աղան հաւասարուեց, նա պատկառանքով բարևեց: Գէորգ աղան երբ նկատեց Սագօյին՝ նրա մարմնի միջով մի այնպիսի սարսուռ անցաւ, որ կարծես ջերմով բռնուած լինէր և քիչ էր մնում, որ սարսափից տապալուէր գեաին:

Սակայն, տեսաւ, որ Սագօն գառան հման հեղ կանգնած՝ իւր յարգանքի բարևն է տալիս: Վախկոտ, միկնոյն ժամանակ և գոռոզ աղան առանց Սագօյի բարևին պատասխանելու՝ լուռ շարունակեց իւր ճամբան:

Մի բոպէ Սագօն մտածում էր մօտենալ, ընկնել այդ մարդու առաջ, խնդրել, աղերսել, բաց անել իւր սիրտը, յայտնել զէպի Ասողիկը տածած սիրոյ մասին, բայց չը համարձակուեց:

Եթէ այդ զէպքը պատահէր մի ուրիշ տեղ, այլ պայմաններում, և իրեն հետ այդպէս ամարդի վարուողը չը լինէր Ասողիկի հայրը, այնպիսին՝ անտարակոյս իսկոյն կը ստանար իւր արժանի պատիժը Սագօյից:

Սակայն խոհեմ երիտասարդը միմիայն հոգոց

արձակելով, զսպեց ինքն իրեն և միակ յոյսը դրեց Աստղիկի հաւատարմութեան վրայ. յիշեց նրա խօսքերը, որ երգուելով կրկնում էր՝ «Սագօ ջան, դու ես իմ գլխի տէրը, ես քոնն եմ մինչև յաւիտեան»:

Գէորգ ազան այդ անակնկալ դէպքից բոլորովին թուլացաւ, հագիւ հազ հասաւ տէրտէրի տան դռան, ուժասպառ ինքն իրեն նետեց ներս և «Օրհնեա տէր» ստելով՝ ծնկաչոյ գալով խնդրեց իւր գլխին «պահպանիչ» կարգալ:

Տէր Մարկոսը նկատելով Գէորգի դիւական դողը, հարցրեց պատճառը: Վերջինս ամեն ինչ մանրամասն կերպով պատմեց. առանց ծածկելու պատմեց նաև Սագօյի և Աստղիկի յարաբերութիւնների մասին, աղջկայ անմիա վարմունքը, Սագօյի յանդգնութիւնը. սկսեց վատաբանել վերջինիս, անուանելով նրան գող, աւագակ և աւելացրեց՝

— Չէ, տէր հայր, հարկաւոր է այդ սրիկային մեր համայնքի միջից հեռացնել, դա մեր գլխին Աստուծոյ պատիժ է, մի պատուհաս: Ես պէտք է աշխատեմ, այդ անդգամի ոտքը մեր գիւղից ընդ միշտ կտրել տալ: Այժմ դուք ասէք, ի՞նչ բարի լուր ունիք ինձ ուրախացնելու:

Բարեբախտաբար տէր Մարկոսը այն քահանաներից չէր, որոնք քծնում են ու շողոքորթում հարուստների առաջ. ուստի փոխանակ ուղղակի հարցին պատասխանելով՝ դիմեց նրան հետևեալ խօսքերով:

— Դուք բիշ առաջ ասացիք, թէ Կապօյենց Մարկոսի տղան համարձակուել է ձեր աղջկայ վրայ աչք ունենալու: Մինչև անգամ երկուսով էլ սիրահարուել են: Եթէ Սագօն, ձեր կարծիքով, առանց կշռելու և ճանաչելու այն տարբերութիւնը, որ կայ

Կապօյենց և Բալօյենց սոսմերի մէջ՝ յանդգնել է սիրել ձեր աղջկան, դա դեռ իմ կարծիքով այնքան էլ դատապարտելի մի բան չէ: Ո՞վ իրաւունք ունի բռնանալու նրա մարդկային անհատական զգացմունքների վրայ: Իբրև մարդ, Սագօն էլ նոյնն է, ինչ որ Սեդրակը կամ Մուշեղը: Միակ զանազանութիւնը նա է, որ վերջին երկուսը հարուստ ծնողների զաւակներ են, իսկ նա՝ Սագօն չունի այդ հարստութիւնը:

Սակայն, որքան ես ճանաչում եմ, Սագօն քաջ, խոհեմ, աշխատասէր մի ազնիւ երիտասարդ է: Այդպիսի անսպառելի հարստութեան տէրը, առաւել բարձր է կանգնած, քան թէ նրանք, որոնք թէև հարուստ ծնողների զաւակներ են, բայց զուրկ այդ յատկութիւններից:

— Տէր հայր, ես ամենևին չեմ կամենում այդ անպիտանի մասին մի բառ անգամ լսել. այդ ձեր գովասանութիւնն ինձ համար ոչ մի նշանակութիւն չունի: Ես եկել եմ այստեղ յատկապէս տեղեկանալու ձեր Պօղոս աղայի հետ ունեցած խօսակցութեան հետևանքի մասին, իսկ դուք հարցիս պատասխանը թողած, Սագօ էք գովում...:

— Հէնց իմ այդ պատասխանը, յարգելի Գէորգ աղա, մասնաւոր կապ ունի այս խօսքերիս հետ: Եթէ դուք լուրթեամբ անցնէիք Սագօյի նկատմամբ, գուցէ իբրև գործին բոլորովին անտեղեակ մէկը, իսկոյն և եթ ձեր հարցին բաւարարութիւն տայի, բայց իբրև եթ ձեր աղջկան և սիրուել փոխադարձաբար, ուստի իմ մէջ ծագեց ինքնադիտակցութիւնս, իմ սրբազան պարտականութեան ձայնը սախիկեց ինձ նախ զզուշացնել ձեզ, լաւ կշռել տալ իրողութեան ծան-

ըութիւնը և ապա ըստ այնմ՝ վարուել կեանքի և մահուան նուրբ խնդիրներում:

Իսկ հարուստ էք, կամենում էք ձեր բոլոր կարողութիւնը յանձնել մի այլ ձեզ նման հարուստ մէկին, որ ամենևին կարօտ չէ զբան: Աւելի լաւ արած չէիք լինի, եթէ ձեր սղջկան ամուսնացնէք Սագոյի հետ, որը կրկին անգամ շեշտում եմ, աւելի բարձր է և վսեմ իւր արժանաւորութիւններով, քան Սեգրակը:

Եւ գիտցէք, որ Սագօն ձեր կարողութեանը տէր դառնալով, աւելի մեծ օգուտներ և ծառայութիւններ կարող է մատուցանել մեր գիւղին և հասարակութեան: Մեր գարաւոր թշնամիները-բրդերը, եթէ այսօր նոյն Սագոյի ահից չեն համարձակում մեր գիւղացուն վնասել, այն ժամանակ բոլորովին չեն վստահանայ մեր գիւղի կողմն անգամ հայելու. և Կապոյենց ու Բալոյենց օջախները փառք և փայլ կատանան՝ ի պատիւ մեզ և մեր հասարակութեան: Սագօն ոչ միայն գող-աւազակ չէ, այլ ինչպէս ասացի, մի ազնիւ սղամարդ է, գիտէ կարգաւ-գրել և բաւական զարգացողութիւն ունի. համոզուեցէք իմ խօսքերին:

Սակայն Գէորդ աղայի սիրտը ապառաժի նման քարացել էր: Տէրտէրի խօսքերը անօր էին նրան շարժելու և շահելու, ուստի գարձաւ ու գայրացած ասաց.

— Տէր հայր, դուք գարձեալ չը պատասխանեցիք իմ հարցին:

— Այժմ ես ուզակի կը պատասխանեմ, ասաց տէր-Մարկոսը: Ես տեսայ Պօղոս աղային. մեր խօսակցութեան միջոցին, ի միջի այլոց, առաջարկեցի նշանել Սեգրակին ասելով, որ արդէն ժամանակն է: Երևում

էր, որ Պօղոս աղան ինքն էլ շատ էր մտածում այդ մասին ու ասաց—Ես էլ գիտեմ, որ ժամանակն է, բայց մեզ յարմար հարսնացու դեռ աչքի առաջ չունենք, և իսկոյն աւելացրեց—Ի՞նչ կասէք, տէր հայր, եթէ Բալոյենց Գէորդի աղջիկը ուզելու լինենք, հօ չը հառութիւն չը կ'սյ...

Ես, ի հարկէ, իմ կողմից հաւանութիւն տուի և նա խոստացաւ զայ ձեզ մօտ այդ մասին խօսելու: Բայց այս էլ ասեմ ձեզ, եթէ Սագօն և Ասողիկը արդարև սիրահարուած են իրար վրայ, պսակի ժամանակ իմ հարցին՝ «Ինչու իմ մահ հնազանդ ես» աղջիկը բացասական պատասխան եթէ-տայ, նոյն իսկ նշանացի կերպով, կարգս վկայ, կը դադարեցնեմ սուրբ պսակի խորհուրդը կատարելս և չեմ պսակի Սեգրակի հետ:

— Տէր-հայր, բացականչեց աղան, հօ տէրտէրութիւնից չէք բէգարած ու փիլոնից ձեռք վեր առած: Եթէ դուք յիրաւի այդպէս վարուելու լինիք, այն ժամանակ ես գիտեմ, թէ ինչ կ'անեմ:

— Չը գիտէք, որ Սահակ հայր սուրբը իմ մօտիկ բարեկամն է, նոյնպէս և գործակալը: Չը գիտէք, թէ Թաւրիզում և թէ Սալմաստում ինձ շատ լաւ են ճառարիզում և թէ Սալմաստում ունեմ Գաբրիէլ նաչում... Վերջապէս էջմիածնում ունեմ Գաբրիէլ վարդապետին, որը Ղազարապատի պարխազներից էլ պինդ կ'անգնած է իմ կողմը:

Այս ասելով՝ Գէորդ աղան պատրաստում էր դուրս գալ տէրտէրի մօտից, երբ յանկարծ դուռը բացուեց ու շէճքում երևաց Սագոյի պարթև հասակը: Տէրտէրն ու աղան մնացին շուարած. այդ նրանց բոլորովին կաշկանդեց:

Սագօն, թէև վճռել էր այդ երեկոյ փախցնել

Աստղիկին, բայց սկզբունքով նա հակառակ էր այդ տեսակի յափշտակութեան: Ուստի առանց ենթադրելու, թէ Գէորգ աղան տէրաէրի մօտ կը լինի, երբ փողոցում վերջինիս պատահեց և որից ստացաւ լուռ անպատուութիւն, որոշեց զիմել իւր հագնոր պետին՝ տէր Մարկոսին, պատմել ամեն ինչ մանրամասն և խնդրել նրա աջակցութիւնը: Գուցէ, մտածում էր նա, այդ բարի անձնաւորութիւնը կարող կը լինի համոզել և շահել այդ անպուժ ծնողի բարացած սիրտը, այն ժամանակ փախցնելը աւելորդ կը լինի: Երիտասարդը նախ մօտեցաւ տէր հօրը, համբուրեց նրա աջը և ապա դառնալով քարացած Բալոյենց Գէորգին՝ բարեկեց և սասց.

— Գէորգ աղա, կէս ժամ առաջ փողոցում ձեզ պատահելով՝ բարեկցի, իսկ դուք իմ բարեկին չը բարեհաճեցիք գէթ գլխի թեթև շարժումով պատասխանելու... ուզում էի նետուել ձեր սոսների տակ, խընդրել, աղերսել, որ բարի գտնուէք լսել իմ աղերսանքը—չը համարձակուեցի: Իմ խնդիրն ոչ այլ ինչ էր, եթէ ոչ ձեր աղջկայ—Աստղիկի ձեռքը...

Գէորգ աղա, եթէ դուք ձեր կեանքում գոնէ մի բոպէ եղել էք սիրոյ ազգեցութեան ներքոյ, անշուշտ կարող էք ըմբռնել «սէր» բառի նշանակութիւնը... Իմ դէպի ձեր աղջիկը տաժած սիրոյ ոյժն էր ստիպել փողոցում, արար աշխարհի աչքի առաջ ստորանալ, և ես պատրաստ էի սողալ ձեր սոսների տակ, սակայն դուք փախչում էիք ինձանից: Այդ էր, այդ սէրն էր, որ բերեց ինձ այստեղ, զիմելու տէր հօրը և խնդրելու նրա օգնութիւնը: Այս ասելով քաջ երիտասարդը, որ տասը Գէորգի արժէքն ունէր, խոնարհուեց սիրոյ զօրութեան առաջ և շարունակեց.

— Տեսէք, Գէորգ աղա, ահա այն զուլը, որ այս բոպէիս խոնարհում է ձեր առաջ, նա ոչ մի բանով պակաս չէ ուրիշների գլխից, ոչ խելքով և ոչ էլ հասկացողութեամբ: Ահա այն բազուկները, որոնք պատրաստ են գրկելու սիրեցեալիս, իսկ հակառակ դէպքում ջարդ ու փշուր անելու իւր թշնամիներին... Վերջապէս ահաւասիկ այն սիրտը, որ գիտէ սիրել և նոյն չափով ատել: Գէորգ աղա, կեանքովս պարտական կը լինեմ ձեզ, լսեցէք ինձ, մի մերժէք... Ես սիրել եմ Աստղիկին և սիրուել նրանից փոխադարձաբար: Չորս ամիս է ինչ, որ այդ սէրը խոր արմատներ է արձակել մեր երկուսի սրտերի մէջ. մի պոկէք դուք այդ նորաբողբոջ ծիլը:

Բալոյենց Գէորգը կարծես քարացել էր— առանց մի խօսք արտասանելու, ինքն իրան նետեց փողոց և փախաւ...

X

Կէս օր էր. յուլիսեան տօթային մի օր: Քամու ամենափոքր նշոյլն անգամ չէր զգացուում: Փոշին ծածկել էր ծառերի տերևները, որոնք անշարժ էին և կարծես կախարդուած լինէին:

Գիւղացիք իրենց կալերում դանդաղ աշխատում էին և շարունակ գանգատում չափազանց շոգից: Գէորգ աղայի կալուածքումն էլ աշխատանքը ետում էր:

Տիկին Համասիլուր և Աստղիկը չը գիտէին, թէ ուր էր գնացել Գէորգ աղան: Երբ մայրը մտաւ աղջկայ սենեակը, վերջինս նստած էր և ըստ երևոյթին տխուր էր, մօտեցաւ համբուրեց Աստղիկին և սասց.

— Աղջիկս, ես իբրև քո ծնող մայր, գիտցիր, որ միայն քո բարին ու լաւն եմ ցանկանում. լսիր ինձ, մի հակառակիր հօրդ կամքին: Չէ՞ որ մենք քո ամենամօտ բարեկամներդ ենք: Եթէ կամենում ենք քեզ պսակել Սեդրակի հետ, դա միմիայն քո բազմաւորութիւնը մեր աչքի առաջ ունենալն է, և վերջապէս Սագօն ի՞նչ է համեմատած Սեդրակի հետ: Ամենքը նրան ճանաչում են, իբրև ամենավատ յատկութիւնների տէր մէկին: Գիտէս, աղջիկս, այսօր առաւօտեան հայրիկիդ բարկութիւնը մեղմացնելու համար, ասացի նրան, որ դու պատրաստ ես կատարել հօրդ կամքը: Նա լսելով իմ այս խօսքերը՝ քիչ հանդարտուեց:

— Մայրիկ, բղաւեց Աստղիկը և այնպիսի մի ճիշտ արձակեց, որ կարծես սրի հարուածներ էին տալիս նրա սրտին, դու ասացիր, որ ես պատրաստ եմ կատարել նրա կամքը, զոհել ամեն ինչ և զգայմունք — գէթ նրա բարկութիւնը չը շարժելու համար... սէ, դա աւելի քան բռնակալութիւն է: Ո՛չ, ես չեմ կարող մոռանալ Սագօյին: Բացի նրանից ուրիշը տեղ չունի իմ սրտում, միմիայն նա է իմ փեսացուն:

Ես միշտ էլ հնազանդ եմ եղել և յարգել ձեր ծնողական կամքը, իսկ այս գէպքում՝ սիրոյ զգացմունքների իրաւունքը վերապահում եմ միմիայն ինձ: Ո՛չ դուք, իբրև ծնողք, ո՛չ մարդիկ, ո՛չ էլ արար աշխարհ, չունէք իրաւունք բռնանալու: Ես ինձ կը սպանեմ, կը թունաւորուեմ...

— Ի՞նչ, պոռաց մայրը, դու դարձեալ համարձակում ես այդպէս ազատ խօսել քո խելառ զգացմունքների մասին: Մինչև այժմ համոզում էի, որ մի քիչ խելքի գաս, քո լաւն ու բարին ճանաչես,

այսուհետև հրամայում եմ քեզ լսել: Մտքիցդ բոլորովին հանիր այդ Սագօ կոչուած սրիկային — այս ասելով մայրը՝ հեռացաւ:

Խեղճ աղջիկ, ի՞նչ անէր. ո՛չ մի մխիթարութիւն, ո՛չ մի սիրտանք: Գլուխը ո՛ր քարին տար — հայրը բռնաւոր, մայրը կոյր զործիք նրա ձեռքին:

Ծնողների բռնութիւնը մի կողմից, սրտի մէջ այրուող սիրոյ խարոյկը միւս կողմից, գրեթէ յուսահատութեան էին հասցնում խեղճ ու կրակ աղջկան:

Ծնկաչոք ընկաւ գետին, պարզեց ձեռքերը դէպի երկինք և արտասուալի աչքերով դիմեց Աստծուն, (Բարձրեալին) և իւր աղերսական աղօթքը սկսեց այսպէս. «Ա՛խ, Տէ՛ր իմ Աստուած, ինչու այսպէս անխնայ տանջում ես ինձ. ո՞ր մեղքիս համար դու ինձ պատժում ես: Ի՞նչ գիտէի ես, թէ ի՞նչ է սէրը կամ ատելութիւնը. չէ՞ որ այդ ամենը Գու ներշնչեցիր իմ մէջ: Ինչո՞վ եմ ես մեղաւոր, որ իմ բոլոր սրտովս սիրել եմ Սագօյին. ինչո՞ւմն է իմ յանցանքը, երբ անկարող եմ սիրել ուրիշին — Սեդրակին...»

Չէ՞ որ այդ բոլոր յատկութիւնները Գու ես արձարծել իմ մէջ... Ա՛խ, Տէ՛ր իմ, ցոյց տուր ինձ մի ելք, մի միջոց, որ կարողանամ յաղթել այս բոլոր արգելքներին, որոնք յուսահատեցնում են իմ հոգին և կաշկանդում իմ միտքը...

Գու գիտես մեր գաղտնիքը, գիտես, որ ես ու Սագօն ստիպուած ենք փախչելով ազատուել բռնակալութիւնից: Օրհնիր մեզ: Գու որ ամենագէտ ես, պաշտպանիր արգարութիւնը, ազատիր մեզ փորձու-

թիւնից և մարդկային բռնակալութիւնից:

Գու, որ Աստուած էիր ու ճաշակեցիր մարդկային չարութեան ու ստորութեան դառն պտուղը, Քեզ, ամենազօր Ասածուդ համարձակուեց և ի խաչ հանեց այդ զագան մարդկութիւնը: Գու ևս դժուարանում էիր համբերութեամբ տանել մարդ զագանի հնարած բոլոր չարչարանքները և դիմեցիր Երկնաւոր Հօրդ աղերսելով «Հայր, անցն գրաժակս այս յինէն»:

Ես մի տկար արարած՝ կարող եմ դիմանալ, եթէ Գու ամենակարող զօրութեամբդ չը պաշտպանես ինձ...»

Գեռ Աստղիկը իւր աղօթքը չէր վերջացրած, երբ դուռը բացուեց և ներս մտաւ հայրը:

Նա նկատեց աղջկայ աչքերում արասուրբի խոշոր կաթիլներ, որոնք գեղեցիկ այտերի վրայից գլորուելով թափուում էին ներքև, և դառնալով նրան ասաց.

— Գիտե՞մ դաւակն, քեզ համար հարկաւ շատ ծանր է բաժանուել քո ծնողներից, ոչինչ, դու ոչ առաջինն ես և ոչ էլ վերջինը պէտք է լինես, այդպէս է կանոնը: Եթէ Սեդրակի նման տղամարդը մօտդ լինի, տխրութիւնը, ճանձրոյթը ձեզնից քառասուն աւուր ճանապարհ հեռու կը փախչին: Շուտով նշանդ կը բերեն, մի օր էլ, եթէ Տէրը կամեցաւ, պսակդ կը կատարենք: Աշխարհ է... ասում են աշխարհը կամուրջ է և ամեն մարդ իւր կեանքում մի անգամ այդ կամուրջի վրայով պիտի անց կենայ անպայման...

Աստղիկը կարծես չը լսեց հօր խօսքերը: Այդ րոպէին նրա մտքում որոշում էր գիշերուայ փա-

խուստի հարցը, իսկ աչքերի առաջ Սադօյի պատկերը...

XI

Մինչդեռ Բալօյինց Գէորգը մեծ եռանդով աշխատում էր իրագործել իւր ծրագիրը, ոչ պակաս եռանդով աշխատում էր և Սադօն—իւրացնել առանց այն էլ հոգով, սրտով պատկանած աղջկան: Չը նայած, որ առաջինը ինքն էր առաջարկել Աստղիկին փախչել միասին, այնուամենայնիւ նա սկզբունքով հակառակ էր այդ գործողութեան: Հէնց այդ էր ստիպել նրան խնդրել տէր Մարկոսի աջակցութիւնը. այդ էր ստիպել նրան աղերսելու Գէորգ աղային, բաց էր ստիպել նրան աղերսելու Գէորգ աղային, բաց էր ստիպել իւր սիրտը: Բայց երբ տեսաւ, որ օրինական ճանապարհով անկարելի է սիրած-փայփայած աղջկայ հետ ամուսնանալ—ակամայ պէտք էր դիմել այդ միջոցին, մանաւանդ որ Աստղիկն էլ համամիտ էր իւր հետ:

Թամբեց իւր ձին—Արծուիկին, համբուրեց նրա աչքերը և ապա շտապով մտաւ խրճիթ: Այնտեղ նա գրկեց ծերունի հօրն ու ասաց.

— Հայրիկ, օրհնիր ինձ, աուր քո հայրական սուրբ օրհնութիւնը. ես գնում եմ, և դու իմ մասին շատ մի մտածիր... Հայրիկ ջան, ես միշտ յարգել եմ և պաշտել քեզ, պաշտել եմ քեզ բոլոր սրբատուս: Ներքի ինձ, իմ սխալներս, որոնք գուցէ շատ անգամ վշտացրած լինեն քո հայրական սիրտը:

Օրհնիր ինձ: Այսօր պիտի որոշուի կապօյինց տոհմի գոյութեան և յարատևութեան խնդիրը... Գնում եմ մայրիկիս գերեզմանի քարը համբուրելու,

և նրա սուրբ ոսկորներին իմ վերջին ֆնաս բարեաւը ասելու:

Մինչ Սագօն այդ սրտաձմիկ խօսքերն էր արտասանում՝ ծերունին կարծես մեքենայաբար իւր աջ ձեռքը բարձրացնելով որդու գլխի վրայ, ինչ որ անհասկանալի բառեր էր արտասանում...

Միայն վերջին բառերը, որ յաջողուեց նրա լսել, դա՛ «Կապօյենց օջախ» խօսքերն էին: Եւ երբ որդին ոտքի կանգնեց ու համբուրեց հօր ալեգարդ մօրուքը, ծերունին գլմեց նրան ասելով.

— Սագօ ջան, քեզ յայանի է, որ իմ վերջին յոյսս, հետևապէս և Կապօյենց պարտէզի միակ ծաղիկը դու ես ֆնացել. ուր որ լինես, այստեղ, թէ օտարութեան մէջ, քո սրբազան պարտականութիւնդ է՝ միշտ յիշել Կապօյենց օջախը և աշխատել վառ պահել այդ օջախի կրակը, որպէսզի չը հանգչի...

Տոհմական սէրը, պատիւը դու պարտական ես գերադասել ամեն բանից: Պու գեռ ջահել ես, լաւ չես կարողանում ըմբռնել տոհմի նշանակութիւնը, նրա պատիւը և գոյութեան խնդիրը:

Քո նախորդները—պապերդ այդ օջախի կրակը վառ պահելով, ժառանգաբար յանձնել են քեզ: Եթէ կարողացար ամեն տեսակ արգելքներ յաղթելով միշտ վառ պահել նրան և ապապայում, դա կը լինի քո ամենամեծ քաջութիւնը: Ա՛խ, Սագօ ջան, եթէ կարողանայի գանակի մի հարուածով պատառել այս իմ կուրծքը, քեզ ցոյց կը տայի իմ սիրտը, այս ամանջուած մորմոքուած սիրտը, որ ծնած օրիցդ միշտ սիրել է քեզ, աղօթել քո բարօրութեան համար և այդ սրտի միակ ցանկութիւնն է՝ քեզ տեսնել ամուսնացած: Ե՛կ զաւակս, լսիր ինձ, ամուսնացիր... տոհմի գո-

յութիւնը ամուսնութեան մէջն է, դրանով դու ինձ յուխտեան մխիթարած կը լինիս... Իսկ եթէ դու այսօր գնում ես անմիա մի գործ ձեռնարկելու, որ իմ հոգին կարծես գուշակում է, գուցէ նոյն իսկ մահուան ընդ առաջ, չունիս քեզ նպատակ քո տոհմի և հայրենական օջախի պահպանելու ձգտումը. ես հէնց այժմուսնից անիծում եմ քեզ... Գնա՛, բայց մի մոռանար քո ծերունի հօր խօսքերը...

Այս ասաց ծերուկը և թիկն տուեց անկողնուն ու լսեց:

Սագօն բոլոր ժամանակ լուռ, ամենայն ակնածութեամբ լսում էր հօր ոգևորուած խօսքերը. այդ խօսքերը ասեղի նման ծակում էին նրա սիրտը: Ի՛նչ անէր, ի՛նչ ասէր. սաստիկ զգածուած՝ հազիւ մի քանի կցկաւուր բառեր գտաւ ծերունուն հանգստացնելու ու շտապով դուրս եկաւ:

Նստաւ Արծուիկի վրայ և սլացաւ դէպի գիւղի գերեզմանատունը:

Գերեզմանատան գլխաւոր մուտքի մօտ ցած գալով ձիուց, դիմեց դէպի մօր շիրիմը, չոգեց և լուռ աղօթում էր... Կրակի նման տաքացած ճակատը մօտեցրեց նա գերեզմանի մամռոտ քարերին, բոպէապէս զգաց մի հոճելի շփումն, ուղեղի զովացուցիչ հանգստութիւն և դառնալով այդ անխօս քարին, ասաց:

«Մայր իմ, գիտեմ, դու քո հոգու աչքերով տեսնում ես ամեն բան:

Դու գիտես որդուդ կեանքի բոլոր մանրամասնութիւնները: Գիտես և այն, որ այս գիշեր ես և Աստղիկը որոշել ենք փախչելով օտարութեան մէջ միանալ, որտեղ մեզ ոչ որ չի կարող խանգարել:

Օտարութիւնս, ո՛վ գիտէ, գուցէ շատ հե-  
ռու, գուցէ միւս անգամ բազմ չունենամ քո գերեզ-  
մանի մօտ գալու և աղօթելու: Գուցէ ծերունի հօրս  
աչքերը մահուան ընկած ծածկուին ո՛չ իմ, այլ  
օտարի մատներով: Ազաչում եմ, ներիր ինձ և թող  
քո արգար հողին առաջնորդ լինի մեզ:

Ահա եկել եմ վերջին հրաժեշտս տալու քո սուրբ  
ոսկորներին: Մնաս բարեան իմ թանկագին մայր, մնաս  
բարեաւ դու օրհնեալ շիրիմ):

Այս ասաց ու վեր կացաւ, խաչակնքեց, համբու-  
րեց գերեզմանի քարը և հեռացաւ:

Յիշեալ գերեզմանատնից ո՛չ հեռու կար մի քան-  
դուած մատուռ: Տանեակ տարիներ առաջ, երբ դեռ  
շէն էր այդ մատուռը, այնտեղ պատարագում էին  
հայ քահանաները: Թէ Պարսկաստանից և թէ Տաճ-  
կաստանից բազմաթիւ ուխտաւորներ գալիս էին  
ուխտի:

Ամեն տարի սուրբ Սարգսի տօնին՝ հանդիսաւոր  
պատարագ և թափօր էր կատարուում. հարիւրներով  
ոչխարներ էին մսրթում, մատաղ անում: Ժողովրդից  
շատերը իրենց արու զաւակներին նուիրում էին այդ  
զօրաւոր սուրբ Սարգսին...

Ջանազան արհաւիրքների պատճառով՝ երկիրը  
մատնուեց կործանման և աղքատութեան, հետևապէս  
և այդ մատուռը դարձաւ կիսաքանդ և անշէն:

Դադարեց ժամերգութիւնը, լռեցին քաղցրաձայն  
շարականների ու մեղեդիների հնչիւնները: Սուրբ  
սեղանի վրայ այլ ևս չէր պատարագում քահանան,  
Նախկին հաղարաւոր ուխտաւորներից ո՛չ մէկը չէր  
երևում...

Տարիների ընթացքում անտիապաշտ ժողովրդի

մէջ խօսուում, տարածւում էր զանազան առասպելներ  
այդ մատուռի մասին և նախկին՝ բարեպաշտ ժողո-  
վրդի յետագայ սերնդի վրայ՝ յիշեալ առասպելները  
դրօշմել էին անի ու սարսափի կնիք:

Թէ գիւղացիք և թէ շրջակայ հայ ու այլազգի  
ժողովուրդը միանգամայն խրտնեց նրանից, այնպէս  
որ, օրը ցերեկով սիրտ չէին անում մատուռի մօտով  
անց կենալ:

Սագօն դիմեց դէպի այդ մատուռը:

Ճինաւուրց սրբավայրի գլխաւոր դռան մօտ ցած  
զալով ձիուց, մտաւ ներս, ամենայն ակնածութեամբ  
և պատկառանքով չոգեց խորանի քարի առաջ, համ-  
բուրեց. «սուրբ Սարգիս, օգնիր ինձ» ասելով՝ աղօ-  
թեց:

Կապեց իւր ձին և հրացանը մի քարի տակ պա-  
հելով՝ դուրս եկաւ և ուղիղ գնաց մտաւ Բալօյենց  
Գէորգի պարաէզը: Մօտ էր նշանակեալ ժամը:

Մինչև Սագօյի գալը, Աստղիկը մի քանի անգամ  
մտել էր պարաէզ, և տեսնելով, որ նա դեռ չի եկել,  
յետ էր գնացել: Այժմ Սագօն կանգնած խորհրդաւոր  
կաղնիների մօտ սպասում էր:

Նա նայեց դէպի տան պատուհանները և նկա-  
տեց, որ այդ երեկոյ սովորականից աւելի է լուսա-  
ւորուած Գէորգ աղայի տունը, ըստ երևոյթին, այն-  
տեղ հիւրեր կային: Լարած իւր բոլոր ուշադրու-  
թիւնը, անհանգիստ, սրտատրոփ սպասում էր Աս-  
տղիկին: Ահա մի շուկ և երկու սպիտակ ձեռներ փա-  
րուեցին նրա վզովը...

— Աստղիկ, իմ հրեշտակ, ինչ է պատահել քեզ,  
դու լալիս ես, ան, էլի հայրիկդ, ո՞ն անգութ մարդ:

— Սնօ ջան, դու չը գիտես, չը գիտես, որ

այս ըոպէիս Պօղոս-աղան եկել է հայրիկիս մօտ հարս-նախօսութեան. Սնգօ ջան, ազատիր ինձ, քո ձեռնէրով սպանիր ինձ... Քեզ էլ, Աստուծուն էլ յայտնի է, որ սիրել եմ քեզ իմ բոլոր հոգովս, սիրել եմ, իբրև իմ հարագաս եղբօրս, իբրև իմ ապագայ ամուսնուն. միակ յոյսս քո վրայ է:

Պաշտպանիր քո Աստղիկին, որին բռնի կերպով ուզում են խլել քեզնից և պսակել ուրիշի հետ... Օ՛, եթէ դու չը պաշտպանես ինձ, ես կորած եմ... ո՛չ, ո՛չ, աւելի շուտ ինձ կը սպանեմ...:

Սագօն աշխատում էր հանգստացնել մխիթարական խօսքերով յուզուած աղջկան: Յանկարծ մի քանի անգամ իրար յետևից լսուեցին ճրագանի պայթիւններ: Երկու սիրահարները ըոպէսպէս ամեն բան մոռանալով, լարեցին իրենց լսողութիւնը:

Բաւական հեռուից լսուեցին միաժամանակ նաև հաւարի ձայներ—օգնութիւն... քրդերը... քրդերը... տարան, սպանեցին...:

Սագօն խեղճ հասկացաւ թէ բանը ինչու՞ն է, և դառնալով Աստղիկին ասաց—սիրելիս, քրդերը յարձակուել են գիւղի վրայ, երևի բռնում, տանում են գիւղի նախիրը. այս ըոպէիս այնտեղ տղամարդիկ կուռն են աւազակների հետ. պէտք է գնալ նրանց օգնութեան:

— Սնգօ ջան, գլխիդ մատաղ, մի գնար, թող տանեն, ինչո՞ւ ես իզնուր գնում, ախր քեզ կարող են վրասել այդ անխիճածները ..

— Աստղիկս, չէ՞ որ ես էլ տղամարդ եմ, գլխիս գտակ ունեմ, ասան, կարո՞ղ եմ սանտասիրա կերպով տանել այդ վիրաւորանքը, այդ ամօթը, որ հասցնում

են մեզ այդ լրբերը: Չէ, հոգիս, դու անհոգ կաց, դեռ լոյսը չը բացուած՝ ես դարձեալ այստեղ կը լինիմ:

Այս ասելով, համբուրեց շուարած աղջկան և անյայտացաւ խաւարի մէջ: Հարայ-հրոցը գնալով սաստկանում էր Սագօն շտապով անցաւ մի խումբ կանանց մօտով և նրա ականջին հասան այս խօսքերը.

«Խեղճ տղայ... Խեղճ Սեդրակ, մի ժամ առաջ հայրը գնացել էր նրա համար հարսնախօսութեան. այստեղ քրդերը... սպանեցին... արը-սև դարձրին...»:

Սեդրակի՞ն սպանել են քրդերը — մեքենայաբար կրկնեց Սագօն: Քաջի վեհ սիրտը կարծես ո՛չ մի տտելութիւն չէր տածում դէպի նա: Սագօն շատ լաւ գիտէր, որ Սեդրակն իւր ոտիսն էր, գիտէր և այն, որ վերջինիս յայտնի էր իւր և Աստղիկի յարաբերութիւնների մասին, բայց և այնպէս խոչընդոտ էր հանդիսանում:

Սագօյի տեղ մի ուրիշը գուցէ ուրախանար, որ այդպէս հեշտ ազատուեց իւր հակառակորդից, բայց մեծահոգի երիտասարդը բարկութիւնից կատաղեց:

Վազէ-վազ հասաւ սուրբ Սարգսի մատուռը, վերցրեց հրացանը, զիտեց ատրճանակը, նստաւ Արծուիկի վրայ և մի ըոպէում սլացաւ դէպքի վայրը:

Նա մենակ էր, չը գիտէր, թէ բանի հոգի են քրդերը, ուստի անխոհեմութիւն կը լինէր մէն-մէնակ տանեակ զինուած աւազակների հետ կռուի բռնուել: Որոշեց մի կերպով հաստատ տեղեկանալ ու ըստ այնմ գործել:

Կանգնեց ու լարեց իւր ամբողջ ուշադրութիւնը. նրա ականջին հասան անէծքների ու հայհոյանքների ձայներ, ողբի ու լացի աղաղակներ: Ըստ երևոյթին

այդ աղէտայի դէպքը պատահել էր Պօղոս աղայի տան մօտերքը: Շակուեց իւր ձիու վրայ և պատրաստ էր թռչել դէպի այն կողմը, երբ յանկարծ նրա առաջ դուրս եկան մի քանի գիւղացի երիտասարդներ, որոնք ուրուականների նման փախուստ էին տալիս: Երբ նրանք նկատեցին Սաբօյին, որը մէնակ իւր ձիու վրայ նստած՝ սպասում էր, ձայն տուին.

— Սաբօ ջան, գլխիդ ճարը տես, փախիր, թէ չէ քեզ էլ կը սպանեն, ինչպէս սպանեցին խեղճ Սեդրակին: Ահա նրանք գալիս են. փախչենք... դու էլ փախիր, Սաբօ ջան...:

Քաջը մի արհամարական հայեացք նետեց այդ փախկոտների վրայ և, եթէ ժամանակը ներէր, գուցէ մտրակի հարուածների տակ չորացնէր նրանց, բայց այդ մասին մտածելու ժամանակը չէր:

Ուստի, քաշուելով մութ ստուերի մէջ, նկատեց մի քանի քրդերի, որոնք հարիւրի չափ ոչխարներ և մօտ տասն և հինգ գլուխ տաւար առաջները պցած՝ քշում էին, միևնոյն ժամանակ հռհռալով իրենց մէջ խօսում. .

Գիւղը, կարծես ամայի, անմարդաբնակ լինէր: Ամենափոքր զիմաղրութեան նշոյն անգամ բացակայում էր. ամենքը փախել, մտել էին իրենց տները: Միայն Պօղոս աղայի ձայնն էր, որ լալազին աղաղակում էր՝ «անիծեաններ... անաստուածներ»... և կանգնած իւր արիւնաշաղախ որդու զիակի մօտ՝ լալիս էր անմխիթար:

Սաբօն նկատեց, որ քրդերը թուով միայն չորս հոգի էին: Երևի միւսները, մտածեց նա, գնացել են մի այլ տեղ թալանելու, — թէ չէ, հօ չորս քիւրդ չէին համարձակուի զիւր մասնել, կողոպտել... բայց իսկոյն

և եթ աւելացրեց— թէ և այս անտէր զիւղում մի քիւրդն անգամ ի՞նչ ուզի կանի, ո՞չ զիմաղրութիւն կայ և ո՞չ էլ ինքնասպաշտպանութիւն. բոլորը, բոլորը անա փախել, կորել են:

Այդ միջոցին քրդերը հաւասարուում էին Սաբօյի զիրքին: Նրանք իրար հետ խօսում էին և ծիծաղում: Հասակաւոր քրդի մէկը ուսում էր.

— Սուս չտաց այն զիսաւուրը, թէ Սաբօն զիւղումը չէ, բացակայ է: Եթէ նա այստեղ լինէր, մենք այս հարուստ աւարը ձեռք չը պիտի կարողանայինք ձգել: Քրդի խօսքը դեռ բերանումն էր, երբ Սաբօյի արձակած գնդակը նրան գլորեց գետին իսկ ատրճանակի մի քանի հարուածներն ու փամփուշտներն էլ տեսան իրենց գործը: Երկու միւս քրդերի զիակներն էլ տապալուեցին փողոցի մէջ.. չորրորդի գլխին փայլեց Սաբօյի դաշոյնը...

Քիւրդը իսկոյն ճանաչեց նրան, խեղճի լեզուն ջուր դարձաւ:

Նա պաղատելով ընկաւ Արծուիկի ոտների տակ և աղաչում էր խնայել իւր կեանքը...

Պօղոս աղան լսելով հրացանի և ատրճանակի ձայները, իւր ծառաների հետ միասին սիրտ առած եկաւ տեսնելու, թէ էլ ի՞նչ նոր զուլում պատահեց:

Նա տեսաւ Սաբօյին դաշոյնը ձեռին կանգնած և մի մարդ նրա ոտների տակ կուչ եկած. իսկ մի քանի քայլի վրայ, փողոցի փոշու մէջ թաւալուում էին միւս երեք քրդերի արիւնաշաղախ զիակները: Իսկոյն հասկացաւ, թէ բանն ինչո՞ւնն է:

Ուեղճ մարդը, ցնդուածի նման ապուշ-ապուշ նայում էր քրդերի այլանդակ զիակներին, և ապա գփի նման նետուեց և գրկեց Սաբօյին. համբուրում էր քաջի ձեռները, ճակատը և կրկնում՝ «Սաբօ ջան,

իմ որդի Սեդրակը մահուան տագնապի վերջին բու-  
պէում՝ վրէժ էր կանչում, դու քո այդ ձեռներովդ  
որդուս վրէժը լուծեցիր... թոյ համբուրեմ այդ ձեռ-  
ներդ... ո՛հ, Սեդրակս մեռնում է... Սափօ ջան, արի  
գնանք նրա մօտ... մօտեցիր և պատմիր քո մեռնող  
թշուառ եղբորդ, թէ ինչպէս լուծեցիր նրա արեան  
վրէժը»:

Երբ նրանք մօտենում էին Սեդրակի գրեթէ  
անշնչացած դիակին, որը ընկած էր գետնի վրայ,  
ափստեղ մեռնողի մայրը և քոյրը աղիտղորմ ձայնով  
ողբում էին անդառնալի կորուստը:

Սափօն մօտեցաւ և շոգեց: Այդ միջոցին Սեդ-  
րակի կրծքից մի ծանր «ան» դուրս թուաւ և շըր-  
թունքների արանքից թոյլ ձայնով լսուեց «վրէժ»  
խօսքը... Սափօն կուացաւ և իւր շրթունքները մօտեցնե-  
լով Սեդրակի գունաթափ դէմքին, որի վրայ մահն  
արդէն իսկ դրել էր իւր դրոշմը, ասաց.— Սեդրակ  
ջան, ես լուծեցի քո արեան վրէժը, հանգստացիր:  
Անիծեալ քրդերից երեքին այս ձեռներովս սասակե-  
ցրի, իսկ չորրորդը՝ ահաւասիկ կատուի նման ընկած  
է քո ոտների տակ:

Այդ խօսքերը կարծես կենդանութիւն ներշնչե-  
ցին մահամերձ վիրաւորին:

Նա բացաւ իւր մարած աչքերը, տեսաւ Սափօ-  
յին և դալկացած բազուկը բարձրացնելով՝ կամե-  
նում էր գրկել այդ հերոսին, սակայն նրանում ոյժ  
չէր մնացել... բռնեց քաջի ձեռքը և կցկտուր շնչաց:

— Շնորհակալ եմ... Սափօ ջան, դու իմ եղբայրն  
ես... պսակուիր Աստղիկի հետ... բաղդաւոր լինիք...  
մնաք բարեալ:

Այսքանը միայն կարողացաւ արտասանել, լուեց  
և հոգին աւանդեց:

Սրտածմլիկ էր տեսարանը: Ծնողների և քրոջ  
անմխիթար լացն ու կոծը, սիրտ կտրատող աղաղա-  
կը՝ լսողի աղիքներն էին գալարում: Մինչդեռ ծա-  
ռաները պատրաստուած էին տուն տանել Սեդրակի  
անշնչացած դիակը, Սափօն զգածուած նայում էր  
այդ տխուր տեսարանին:

Այդ միջոցին, խաւար մթութեան մէջ՝ երկու  
լուռ ականատես ուրուականներ կային: Ներկայ եղող-  
ներից ոչ ոք նրանց չէր նկատած: Յանկարծ մի ձեռք  
իջաւ Սափօյի աջ ուսի վրայ. երբ վերջինս յետ նա-  
յեց, տեսաւ Տէր Մարկոսին, նրա կողքին կանգնած  
էր նաև Աստղիկի հայրը՝ Բալօյեանց Գէորգը...

Այն Սափօն, որ կէս ժամ առաջ առիւծի նման  
կատաղած հրաշքներ էր գործում, այժմ հեզ գառան  
պէս խոնարհուեց և բարեց: Քահանան համբուրեց  
քաջի ճակատը և ասաց.

— Ո՛րդեակ իմ, ուրախ եմ, որ ես քո մասին  
չեմ սխալուած. ամեն ժամանակ և ամեն տեղ միշտ  
էլ ասել եմ, թէ դու մեր գիւղի գոհարն ես, մեր  
պարծանքը: Քո ասպետական վեհ հոգին վաղուց նկա-  
տել էի. և այդ դու միշտ, ինչպէս և այսօր, ապա-  
ցուցել ես կենդանի փաստերով:

Մեզնից ով չը գիտէ, որ այդ ամբաղդ Սեդրակը  
կանգնած էր քո բաղդի դռան առաջ, և դու այդ լաւ  
գիտենալով հանդերձ, չը կարողացար տանել այն նա-  
նախատինքը, այն վիրաւորանքը, որ հասցրին այդ  
անիծեալ քրդերը քո հայրենի գիւղին, քո եղբօրը՝  
Իսկ դու վեհ անձնագոհութեամբ կեանքդ վտանգի են-  
թարկելով՝ քո ախոյեանի, քո ոտխի արեան վրէժը  
լուծեցիր... օրհնեալ լինես, օրհնեալ լինի քո ծնուն-  
եմ և շէն մնայ կապօյեանց տունը:

— Գէորգ աղա, դ՛հւ էլ օրհնիր այս քաջին: Այժմ սա է քո արժանի փեսան: Մենք ամենքս միմիայն նրան ենք պարտական: Դու լսեցիր մեռնող Սեղրակի վերջին խօսքերը, լսեցիր Պօղոս աղայի ասածը:

Գէորգ աղան իւր աջ ձեռքը դնելով Սագօյի գլխին, ասաց.

— Սագօ ջան, նախ քան քեզ օրհնելու, խնդրում եմ ներքի ինձ, որ առանց լաւ ճանաչելու քո վսեմ արժանաւորութիւնը, անպատկառ խօսքերով անպատուել եմ քեզ: Առանց ճանաչելու քո ազնիւ հոգին, գող, աւագակ եմ անուանել. ներքի ինձ: Օրհնում եմ քեզ, իբրև իմ որդուն, իբրև իմ փեսին. դու քո առաւելութիւններովդ աւելի հարուստ ես, քան թէ աղքատ, ինչպէս ես այդ կուրօրէն կարծում էի: Օրհնում եմ քեզ և քո տոհմը, որ ծնել է քեզ պէս քաջին: Գնա՛, որդեակ, Աստղիկս քոնն է, դու վաստակեցիր:

Այս ասելով նա տէր Մարկոսի հետ միասին հեռացաւ:

Սագօն ապշած կանգնած էր: Այդ անակնկալ դէպքը կաշկանդել էր նրա միտքը: Երանգ էր դա, թէ իրողութիւն:

Նա բոլորովին մոռացել էր թէ Արծուիկին և թէ քրդին:

Երբ սթափուեց, տեսաւ, որ քիւրդը ամուր բռնած Արծուիկի սանձից, սպասում է իւր հրամանին:

— Ա՛յ քիւրդ, ի՛նչ ես կանգնել, մնացել, չէիր կարող փախչել. չէ՞ որ ժամանակ շատ ունէիր, ասաց նա:

— Փախչել, ո՛ւր. քեզ նման կտրիճից ես ո՛ւր փախչեմ, չէ՞ որ ես քո գերին եմ: Ինձ համար աւե-

լի պատիւ է ծառայել քեզ նման քաջին, քան թէ մեր շէյխին...

— Անուսդ ինչպէ՛ս է, քիւրդ, հարցրեց Սագօն.

— Գո ծառան, Հասօ—պատասխանեց քիւրդը:

— Լաւ... բայց չեմ հասկանում, ի՛նչն է գըրդում քեզ մնալ ինձ մօտ ծառայութեան, քանի որ դու, իբրև ազատ ստրի գաւակ, ձեր օգաներում աւելի լաւ կեանք կարող ես ունենալ, քան թէ մեր գիւղում:

— Ս՛ղա Սագօ, իմ ընկերները իրար յեակից սպանուեցիր քո ձեռքով, նրանց անշնչացած դիակները փողոցում մնացել են ընկած, ոոյնը ինձ էր վիճակուած, եթէ դու քո մեծահոգութեամբդ ինձ չը խնայէիր: Դու բախշեցիր ինձ իմ կեանքը, որով պարտաւորեցիր ինձ յաւիտեան:

— Հասօ, հասկացայ քո միտքը: Ես քեզ արձակում եմ ազատ, դնա գտիր քեզ օգնողներ, հաւաքեցէք այդ դիակները և գիւղից դուրս բերելով թաղեցէք: Գնա՛, Հասօ, դու ազատ ես:

— Չէ, սղա Սագօ, ինձ մի վրնդիր, թոյլ տուր ինձ մնալ ու ծառայել քեզ, ինչպէս մի հաւատարիմ շուն, մինչև հատուցանեմ իմ պատքը... այժմ հրամայիր ինձ հաւաքել դիակները և թաղել...

— Որ այդպէս է, դնանք միասին:

Այս ասելով մօտեցան թափուած դիակներին: Այնտեղ մի քանի հանդիսատեսներ կանգնած նայում էին քրդերին: Նրանք նկատելով Սագօյին՝ միաբերան սկսեցին օրհնել օրուայ հերոսին: Սագօն դիմեց մի տարիքաւոր գիւղացու յասելով—Մեղքոն ապէր, մեզ համար բան ու թի ճարիր, տանենք այդ դիակները գիւղից դուրս թաղենք: Ի՞նչ արած, կեղտոտում ենք, մաքրելն էլ մեր վզի պարտքն է... Մինչև Մեղքոնի

բան ու թի հասցնելը, Սագօն միւսները օգնութեամբ, քրդերից երկուսի դիակները կախ տուեց Արծուիկի մէջըին, իսկ երրորդինը՝ քրդի ուսին բարձելով՝ Մելքոնի ընկերակցութեամբ տարան գիւղից գուրս և թաղեցին...

XII

Կէս գիշեր անց էր: Ամեն տեղ տիրել էր խորին գերեզմանային լուսթիւն. մերթ ընդ մերթ շների հաշոցի և չարագուշակ բուերի ձայներն էին լսուում:

Աստղիկը և իւր մայրը անքուն սպասում էին Գէորդ աղայի վերադարձին:

Ինչպէս գիտենք, այդ երեկոյ նրանց մօտ եկած էր Պօղոս աղան հարսնախօսութեան, և Գէորդ աղան ամենայն ուրախութեամբ իւր համաձայնութիւնն էր տուել, երբ յանկարծ Սեդրակի ծառաներից մէկը՝ քոս Գաբօն շնչապառ հասաւ և պատմեց աղէտալի դէպքը:

Այն ժամանակ երկու աղաները վաղեցին դէպի վայրը ուր կատարուել էր դէպքը:

Անցել էր գրեթէ երկու ժամ, մայրը դարձաւ աղջկան ու ասաց.

Զարմանք բան է, ի՞նչ պատահեց, հայրիկդ ինչո՞ւ այդպէս ուշացաւ. երևի մի պատճառ կայ: Գուցէ Պօղոս աղան իւր տունը հրաւիրեց նրան:

Դեռ խօսքը չէր վերջացրած՝ գուռը ծեծեցին... դա Գէորդ աղան էր: Նա լուռ, մտահոգ անցաւ դահլիճ. դէմքի վրայ նկատուում էին թախիծի և տխրութեան կնճիռներ: Շարունակ անց ու դարձ էր անում մի անկիւնից միւսը, և կարծես պապանձուել էր, մի բառ անգամ չէր արտասանում...

Կինը այլ ևս չը համբերեց ու հարցրեց.

— Այ մարդ, մի ասա՛, տեսնենք, ի՞նչ է պատահել, դու սաստիկ յուզուած ես և տխուր:

— Ի՞նչ է պատահել... կրկնեց մարդը, ա՛յն, որ այսօր Պօղոս աղայի տունը քանդուեց, այնտեղ այժմ սուգ ու շիւան է... աւագակ քրդերը յարձակուել են սչխարները ու տաւարները յափշտակելու նպատակով, իսկ Սեդրակը իւր ծառաների հետ ուղեցել է դիմադրել և կուռի է բռնուել. քրդերը նրան վիրաւորել են և սպանել:

— Սեդրակի՞ն սպանել են քրդերը, ինչո՞ւ—հարցնում էր տիկին Համասփիւռը և իւր ականջներին չէր հաւատում:

Իսկ Գէորդ աղան դառնալով Աստղիկին, որը կարծես ամենայն սառնասրտութեամբ լսում էր այդ տխուր պատմութիւնը, ասաց.

— Այժմ աղջիկս, այլ ևս Սեդրակը չը կայ... երևի ճակատագիրը նրա այդպէս էր: Գնա՛, Աստղիկ ջան, ներքի քո հօրը, որ իւր կոպտութեամբը այնքան յամառ գանուեց, որ բռնանում էր քո զգացմունքներին: Ներքի ինձ, որ քո ընտրած փեսացուին—Սագօյին անպատուել եմ: Այն, ես սխալուած էի, ներքի... Մայր ու աղջիկ իրար նայեցին և ապշած մնացին: Մի ըստէ նրանք կասկածում էին Գէորդ աղայի ուղեղի առողջութեան մասին. նրանք մտածում էին «գժուել է», թէ չէ նա այդ խօսքերը արտասանողը չէ:

Աստղիկը չը համբերեց. կաքաւի ուրախութեամբ նստուեց հօր գիրկը և հարցրեց. — Ի՞նչ է պատահել Սագօյի հետ:

— Այն, արդարև Սագօն քաջ երիտասարդ է— շա-

ըունակեց հայրը—ազնիւ տղամարդ է, այդ նա այսօր ցոյց տուեց ողջ աշխարհին:

Չը նայելով, որ այդ անբազդ Սեդրակը իւր ոտին էր, մեծահոգի և վեհանձն Սազօն մոռանալով անձնական հաշիւները, մենակ յարձակուեց թուով չորս հոգի ոտից-զուլս զինուած քրդերի վրայ և վրէժ գոռալով՝ երեքին մի ակնթարթում անշնչացրեց, իսկ չորրորդին կենդանի բռնելով՝ գերի վերցրեց:

Նրա ամենամեծ քաջութիւնը այն էր, որ այդ հերոսը մօտեցաւ մեռնող Սեդրակին և ասաց՝ «եղբայր Սեդրակ, հանգստացիր, ես լուծեցի քո արեան վրէժը, թող հովանայ քո վիրաւոր սիրտը»:

Այդ խօսքերից յետոյ, վիրաւորը բացեց իւր մարելու մօտ աչքերը, տեսաւ Սազօյին և աշխատելով ժպտալ, ասաց՝ «շնորհակալ եմ, Սազօ ջան, շնորհակալ եմ, այժմ հանգիստ կը մեռնեմ...»

Գնա, եղբայր, պտակուիր Աստղիկի հետ... բազդաւոր լինիք... ես մեռնում եմ»:

Այդ Սեդրակի վերջին խօսքերն էին. մեր ականջներով լսեցինք. Այժմ գաւակս, Սազօն է քո փեսան:

Աստղիկը զգածուած լալիս էր. նրա աչքերից արտասուքի խոշոր կաթիլները գլորուում էին ցած — դա ուրախութեան արտասուքն էր: Ո՛հ այդ տեսակի արտասուքը շատ քաղցր է լինում, և նա ուրախութիւնից մերթ հօրն էր գրկում, համբուրում, մերթ մօրը:

Մինչդեռ Գէորգ աղան իւր տան մէջ նստած պատմում էր դէպքի մասին, այնտեղ Սազօն մտածում էր Աստղիկի մասին, յիշեց, որ խոստացել էր մինչև լոյսը բացուելը նորից լինել Գէորգ աղայի պարտէզում, սակայն Գէորգ աղայի և տեր Մարկոսի

խօսքերը, Աստղիկի նկատմամբ տուած խոստումը, բոլորովին հանգստացրին նրան: Ուստի հրամայեց քիւրդ ձասօյին հետևել իրեն. ինքն ուղևորուեց դէպի տուն:

Աղօթարանը բացուել էր. արշալոյսը մօտ էր. ծերունի Մարկոսը քնիցը գարթել, առաւօտեան աղօթքն էր մրմնջում:

Այդ բոպէին «հայրիկ», բացականչեց Սազօն և ընկաւ հօր գիրկը: Նա պատմեց զիշերուայ դէպքը ամենայն մանրամասնութեամբ:

Ուրախ էր Սազօն. ո՛չ պակաս ուրախ էր և ծերունի հայրը: Այդ բերկրանքի ազդեցութեան տակ չէին նկատած, թէ ինչպէս լոյսը բացուել էր և արեգակի լուսաշող ճառագայթները թափանցել էին խորճրթի լուսամուտից դէպի ներս:

Մինչդեռ Սազօն ողևորուած պատմում էր զիշերուայ արկածները, դուռը բացուեց և շէմքում երևացին՝ նախ տէր Մարկոսը և ապա՝ Պօղոս և Գէորգ աղաները...

Այդ երեք անձնաւորութիւնները մօտեցան Կայօյեց Մարկոսին և բարևելով՝ շնորհաւորեցին Սազօյի աննման քաջագործութիւնը և այդ չորս ակեղարդ նահապետները շրջապատելով օրուայ հերոսին, միաբերան օրհնեցին և համբուրեցին բաջի ճակատը:

XIII.

Վարագայ սուրբ խաչի օրն էր: Ամբողջ Մ. գիւղը տօնում էր այդ սրբազան, նուիրական տօնը: Գիւղացիք, մեծ և փոքր այդ օրը սովորականից աւելի ուրախ էին: Գիւղի եկեղեցում ակեղարդ տէր Մարկոսը, Սահակ վարդապետի և խուռն բազմութեան ներկայութեամբ կատարում էր Սազօյի և Աստղիկի սուրբ պտակի խորհուրդը:



ՀՀ Ազգային գր



NL0339

29686